I-370



№ 1 ՅՈՒՆՈՒԱՐ 1887

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 1

«Աղբիւրի» գրական տլբոմ, Սիւան, նկար . . . . Գ. Բաշինջաղեան
Նոր-տարի . . . . . Դ.*
Արեգնազան կամ Կախարդական աշխարհ . . . Դ. Աղայեան
Արքայ Լիր կամ ապերախտ աղջիկներ (բանաստ.) Պ. Հ. Ադամեան
Ձկնորսների երեխաները (Քրանսերէնից) . . . . Օր. Ս. Շելեհանց
Սիւանայ լիճը (բանաստեղծութիւն) . . . . . Գ. Աստուածատրեան
Յովհաննէս Հուս . . . . . Փ. Վարդանեան
Զրօրհնէնք (պատմական)

ԳԻՏՈՒԹԻՒՆ

Ընտանեական զրոյցներ (Դիսանդէից) . . . . . Ս. Հախումեան

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Գեղարքունիք . . . . . Ն. Տէր-Աւետիքեանց

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Փառքի» արձանը: Աղատութիւն: Հրատարակչական ընկերութիւններ: Ապակէ տար:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ

Յուրա սենեակները ձեռաց տաքացնելու համար: Գորգերը ճմեռը մաքրելու համար: Լեզուագէտ Մեցցոֆանտի:

ԶՈՒՍԱՐՃԱԼԻՔ

Առաջարկութիւն, Մաղթանք մանկական, երգ նոտաներով. Դ. Ադ. Մանկական հաշուեխաղ Դ.*. Բերուս Ա. Սարդարեան:

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

Երկու խօսք . . . . . Ս. Բէկնազարեան
Կակազութեան բժշկութիւն . . . . . Ս. Մանդինեան

Խաւեն լուրեր: «Աղբիւր» նուիրողներ. Պրէմիաները. «Մեղու Հայաստանի». Մեր ուսուցիչներին. «Աղբիւրի» մշտական աշխատակիցներ. Մեր զործակալները. Պրակտական ալբոմ: «Աղբիւրի» թղթակցութիւններ: Յայտարարութիւններ:

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ 1887 ԹՈՒԻՆ

Կը հրատարակուի, Թիֆլիզում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով: Մենք կը խոստանանք սեպհական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ:

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսուանը 6 ռուբլի:

Դրուել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԹՄԲԱԳՐԱՏԱՆՆ (Բաքօնսկայա և Բազարնայա փողոցների անկիւնում, Թամամշեվի տանը):

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրուելու համար պէտք է դիմել հեռաւոր հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ». իսկ արտասահմանից. Tiflis. Rédaction du journal arménien «MSCHAK»

Խմբագիր-Հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ОБЪ ИЗДАНІИ ЖУРНАЛА „НАРОДНАЯ ШКОЛА“

въ 1887 году.

(Девятнадцатый годъ).

Журналъ рекомандованъ Учебнымъ Комитетомъ Собственной Е. И. В. Канцеляріи по учрежденіямъ Императрицы Маріи; одобренъ Ученымъ Комитетомъ Министерства Народнаго Просвѣщенія и удостоенъ золотой медали отъ Комитета Грамотности, состоящаго при Имп. Вольно-Экономическомъ Обществѣ.

„Народная Школа“ будетъ издаваться въ 1887 году подъ, прежней редакціей, при участіи всѣхъ прежнихъ и нѣкоторыхъ новыхъ сотрудниковъ.

Программа журнала состоитъ изъ слѣдующихъ отдѣловъ: I) **Законодательство по народному образованію. II) Педагогика и дидактика. III) Исторія народнго образованія. IV) Критика и библіографія. V) Новости и смѣсь.** Этотъ отдѣлъ вполнѣ соотвѣтствуетъ „современному образованію“ въ другихъ журналахъ. Онъ заключаетъ въ себѣ—кромѣ мелкихъ статей и корреспонденцій—систематическій обзоръ (подъ названіемъ **педагогической хроники**) всѣхъ наиболѣе интересныхъ явленій въ области народнаго образованія, въ нашемъ отечествѣ; въ такомъ же систематическомъ видѣ предлагается, по временамъ, **„иностранная хроника по народному образованію“**. Здѣсь же помѣщаются обыкновенно, подъ рубрикою **„разныхъ извѣстій“**, любопытные для народнаго учителя факты изъ общественной и собственно крестьянской жизни, свѣдѣнія по сельскому хозяйству и другимъ техническимъ предметамъ и пр. и пр. Иногда эти факты и свѣдѣнія, по мѣрѣ ихъ важности, группируются въ отдѣльные очерки и подробныя обозрѣнія неизвѣстныхъ сторонъ нашей внутренней жизни. **VI) Приложинія** въ журналу, куда входятъ: а) политическія извѣстія для народныхъ учителей, въ формѣ связнаго разсказа о политическихъ событіяхъ за границею; б) чтенія для народа по всѣмъ предметамъ знанія и в) вообще всякія статьи научнаго и литературнаго содержанія, которыя могутъ содѣйствовать развитію народнаго учителя.

Въ настоящемъ году, въ „Народной Школѣ“ принимали участіе своими трудами: гг. А. И. Анастасіевъ, П. Вемберъ, Н. Домоховскій, д-ръ А. С. Вирениусъ, В. Р. Зотовъ, А. Л. Крыловъ, Д. Д Семеновъ, А А. Ходневъ, Ає. Соколовъ. и мн. др.

„Народная Школа“ будетъ выводить въ 1887-мъ г., по прежнему, ежемѣсячными книжками отъ четырехъ до шести печатныхъ листовъ убористаго шрифта. Годовая цѣна журнала, со всѣми приложеніями, **четыре рубля пятьдесять коп.** съ пересылкою или доставкою; съ перес. за границу **6 руб.** Иногородные подписчики адресуются **исключительно:** въ главную контору „Народной Школы“. С.-Петербургъ. Поварской переулокъ, № 5.

Желая сдѣлать доступнымъ пріобрѣтеніе оставшихся полныхъ экземпляровъ нашего журнала 1878—79—82 гг. и тѣмъ школамъ, которыя, по недостатку средствъ, не могли своевременно подписаться на нихъ, редакція предлагаетъ выписывать ихъ по значительно пониженной цѣнѣ, а именно: вмѣсто 13 р. 50 к. за три года, по **9 руб. съ пересылкою.** При подпискѣ же на 1887 г. слѣдуетъ высылать, круглымъ счетомъ, 13 руб. сер. Подписка на текущій годъ продолжается.

Редакторъ-издатель **А. Пятковскій.**

ՀԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ՆԵՐԿԱՅ 1887 ԹՈՒԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

„ԱՂԲԻՒՐ"

ՄԻԱՄԻՆԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍԻ
(ԵՐԵՒԱՆԵՐԻ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ)
ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

(Տարէնը լոյս է տեսնում 12 համար, 3—4 ս. պատկերական թերթից բացի համարը

Ներկայ 1887 թուականից «Աղբիւրը» կը հրատարակուի նոյն ուղղութիւնով՝ անհամեմատ շքեղ քան նախորդ տարիները, դէրքն աւելի մեծացրած, փոխանակ 2—3 թերթի՝ 3—4 թերթ, և ծնողների բաժինը կը հրատարակուի՝ տարին երեք անգամի փոխանակ, ամեն ամիս առանձին տետրակներով:

Պրէմիաները կը լինին մեր թարգմանչաց՝ որոց ՍԱՀԱԿԱՅ և ՄԵՍՐՈՎԲԱՅ մեծագիր (62 սանտիմ երկարութիւնով և 45 ս. լայնութիւնով) վիմագրուած պատկերները: Այդ պրէմիաներն արդէն պատրաստ են և բաժանորդ դրուողն անդադար կը ստանայ՝ Թիֆլիզում խմբագրատանը, իսկ օտարաքաղաքացիներին կը գրկուին բաժանորդագինն ստանալուց յետոյ իսկոյն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

I) Վէպեր, մանրավէպեր, զրոյցներ, առակներ, հէքեաթներ. Հանապարհորդութիւններ, կենսագրութիւններ: II) Բանաստեղծութիւններ: III) Գիտութիւն և արուեստ: IV) Հեռաբրքիր տեղեկութիւններ: V) Այլն այլք:

ՉՈՒԱՐՃԱԼԻՔ

VI) Մանկական, ֆրեօբէլեան, շախմատի և այլ խաղեր: Բերուստներ, թուաբանական խնդիրներ: Անեկդոտներ, հանելուկներ, շուտասելուկներ: VII) Երգեր՝ ձայնագրած (նոտաներով):

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

VIII) Կրթութեան և դաստիարակութեան՝ վերաբերեալ յօդուածներ և տեղեկութիւններ: IX) Առաջարկութիւններ, խորհուրդներ: X) Մատենախօսութիւն և նոր գրքեր: XI) Խառն լուրեր: XII) Պատասխաններ. Ցայտարարութիւններ:

Դարձեալ կրկնում ենք՝ որ թէ. ներկայ 86 եւ թէ անցեալ 85 թուականների պէս տարուայ հէնց սկզբից ստուգած չլինին «Աղբիւրի»՝ բաժանորդագրութիւնը դադարեցնելու №№-ի ՍՊԱՌՄԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ. խնդրում ենք մեր բաժանորդներին վերանորոգել, եւ թէ նոր կամեցողներն անդադարեն ստորագրուել, որպէսզի մենք եւս կարող լինինք մօտաւորապէս որոշել տպուելու օրինակների քանակութիւնը:

«Աղբիւրի» տարեկան բաժանորդագինը 3 ռ. է, անբաժան են զբրանցից և պրէմիաները, որոնց գինն է 2 ռ. ուրեմն «Աղբիւր» ստանալ կամեցողները պէտք է ուղարկեն թէ «Աղբիւրի» տարեկան բաժանորդագինը և թէ պրէմիաների վճարը ընդամենը 5 ռուբլի:

Հասցէն՝ Тифлисъ. Редакція «Агбюръ», իսկ արտասահմանից՝ Tiflis (Caucase) Rédaction du journal «AGBUR».

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ

ԱՂԲԻՒՐ

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՔԵՒԱՆԵՐՔ

ԵՒ

ՊԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

№ 1

ՅՈՒՆՈՒԱՐ

ԹԻՖԼԻԶ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ, № 1 | 2
1887

Дозволено цензурою, Тифлисъ, 21 Декабря 1886 г.

Типографія И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 1 и 2

ՆՈՐ-ՏԱՐԻ

Տարին բոլորեց,
Երեսը շրջեց,
Նոր դիմակ դրաւ,
Նոր դէմք ցոյց տուաւ։

* * *

Մարդիկ խնդացին,
Կերան, խմեցին,
Նորադէմ տարուն
Դիմաւորեցին.
Մինչ շատ ՀՀշուառներ,
Այրիք ու որբեր,
Ցամաք, չոր հացի
Կարօտ մնացին...

Ղ.*

ԱՐԵԳՆԱԶԱՆ

ԿԱՄ

ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ



1.

Մատ հին ժամանակ, երբ աշխարհքս լինքն էր հրաշքներով և երբ բարի ու չար Ոգիները անընդհատ պատերազմ էին մղում իրար դէմ, ահա այդ ժամանակ Պատիսի ստորոտում կենում էր մի ծերունի իշխան՝ Արման անունով։

Արմանն ունէր երեք զաւակ, մօրից որբ մնացած։ Նրանցից երկուսն աղջիկ էին՝ մինը քան դմփուսը գեղեցիկ, իսկ երրորդը աւելի ևս չքնաղ և չնաշխարհիկ, միայն բարի Ոգիները նրա ինչ լինելը թաքցրել էին հողեղէններից։ Այդպէս էին կամեցել բարի Ոգիները իրանց համար յատնի նպատակով և մի որոշ ժամանակով, երբ որ ժամանակը լրանար, այնուհետև նա կամ աղջիկ և կամ տղայ պիտի դառնար։ Բայց Արմանը նրան չէր որոշում աղջիկներից, և երեքին էլ միաձև աղջկայ հագուստով էր պահում։—«Թող սա էլ աղջիկ համարուի, սոսայ նա, մինչև բարի Ոգիների կամքը կատարուի», և անունն էլ դրաւ Արեգնազան՝ միատե-

սակութեան համար, որովհետև մեծի անունը գրել էր Զանազան, իսկ երկրորդինը՝ Զարմանազան։

Աղեղնազանը մեծացաւ աղջկայ պէս. և թէպէտ հաւատացած էր, որ ինքն աղջիկ է և աղջիկներից էլ ամենից գեղեցիկը, բայց ատելով ատում էր աղջկան վայել բաները։ Նա չէր սիրում բուրդ գզել, թել մանել, կարել ու գործ անել, և դրա հակառակ՝ երբ մի լաւ ձի կամ մի զէնք էր տեսնում, խելքը գնում էր։ Մայրը չունէր, որ նրան ստիպէր, տնարարութիւն սորվեցնէր, իսկ հայրը՝ կարծես գիտութեամբ՝ ոչ միայն այդ մասին ոչինչ հոգս չէր անում, այլ և նրան իր հետ որսի էր տանում և ձի հեծնելն ու զէնք գործածելն էր սորվեցնում։

Այսպէս անցաւ մի ժամանակ. մէկ օր Արմանը կանչեց իր զաւակներին և ասաց.

— Ես ծառայում էի մեր բարի թագաւորին և նա ինձ շատ սիրում էր։ Ահա այս դաշտերն ու անտառները, այս սարերն ու ձորերը, որ Հիմա մեր ձեռին է, բոլորը թագաւորն է ընծայել ինձ իմ հաւատարիմ ծառայութեանս համար։ Երբ որ ձեր մայրը վախճանուեցաւ, սաստիկ տխրութիւն եկաւ վերաս։ Վեր առայ ձեզ, քաշուեցայ այս խաղաղ վայրերը, և տխրութիւնս փարատելու համար՝ գլուխս որսորդութեան տուի։ Դուք Հիմա մեծացել էք, իսկ ես՝ ծերացել։ Դուք այստեղ մեծանում էք, ինչպէս վայրի եղջերուները։ Ինչ կըլինի ձեր վերջը, եթէ այստեղ մնաք, ի հարկէ, շատ վատ։ Ապագայ թշուառութիւնից ձեզ ազատելու համար՝ ես մտածել եմ, որ ձեզանից մէկին տղայի հագուստով ուղարկեմ թագաւորի մօտ ծառայելու։ Թագաւորը սիրով կընդունի և իմ տեղը ժամանակով նրան կըտայ։ Այսպէսով ձեզանից մէկը կարող է միւսներիդ էլ տանել իրան մօտ։ Հիմա որդի կուզենաք դնայ։

— Ես կերթամ, հայրիկ ասաց մեծ աղջիկը։

—Ես էլ, Հայրիկ, ես էլ, մէջ ընկաւ միջնակը։

Արեգնազանը լուռ էր։

—Իսկ դու, Նազանիկ, դու չե՞ս կամենալ, Հարցրեց Հայրը Արեգնազանին. կարծես ուզում էր, որ գնացողը նա լինէր անպատճառ։

—Ինչու չէ, Հայրիկ. բայց երբ որ իմ մեծ քոյրն ուզում է, ես ինչո՞ւ արգելք լինիմ նրան։

—Այստեղ արգելքի բան չկայ, Հոգիս. ինձ համար դուք երեքդ էլ մէկ էք, միայն դեռ չգիտեմ, թէ ձեզանից որն աւելի յարմար կլինի։

—Ես ամենից յարմարն եմ, Հայրիկ, ասաց մեծը, որովհետև ես ամենից մեծն եմ։

—Շատ լաւ, բայց ես առանց պայմանի ոչ մէկիդ չեմ ուղարկելու։ Եթէ դու կամենում ես, կերթաս ուրեմն կրփոխես Հաղուստդ, կընտրես զէնք ու զրահ, և առաւօտուն շատ վաղ քո ձին կրհեծնես, կերթաս որսորդութեան. եթէ դատարկ չվերադառնաս, քեզ կուղարկեմ թագաւորի մօտ։

Միւս առաւօտուն մեծ աղջիկը, ինչպէս պատուիրել էր Հայրը, ճանապարհ ընկաւ զէպի դաշտ մի բան որսալու Համար։ Երբ որ մտաւ մի խոր ձորի մէջ և ուզում էր անցնել միւս կողմը, նրա զէմն ելաւ մի դիմակաւորուած ձիաւոր՝ ոտից մինչև գլուխ զինաւորուած։ Աղջիկը նրան տեսնելուն պէս այնքան վախեցաւ, որ քիչ մնաց լեզուն կապուի, ատատիկ երկիւղից մնաց կաշկանդուած, փախչել անգամ չկարողացաւ։ Ձիաւորը մօտեցաւ նրան ու ասաց—

Ա՛յ տղայ, սիրուն տղայ,
Ո՞ւր ես գնում այդպէս մենակ.
Ինչո՞ւ փափուկ անկողնիցդ
Դուրս ես եկել անժամանակ։

Աղջիկը պատասխանեց կմկմալով.

«ԱՂԲԻՒՐԻ» ԳՐԱԿԱՆ ԱԼԲՈՄ

ՍԵՒԱՆԵՑԻ ԼԻՃԸ

Նկարեց Փ. Բաշինջաղեան իր ձիւմանկար օրինակից

— Ես... ես... գնում եմ...
Ոչ... ոչ... չեմ գնում.
Հա... հա... պիտի գնամ...
Ի՞նչ երեսով յետ դառնամ...

Ձիաւորն ասաց սպառնալով.

— Դու գնո՞ւմ ես, ո՞ւր ես գնում.
Ո՞ւր ես փախչում դու ձեր գեղից.
Յետ դառ իսկոյն, թէ չես ուզում
Որ գլուխդ թռչի տեղից...

Այս ասելով ձիաւորը հանեց թուրը և բարձրացրեց, որ զարկէ աղջկանը, բայց նա բղաւեց—վա՜յ, վա՜յ, մի՛ զարկիր, մի՛ զարկիր, ես աղջիկ եմ, ես աղջիկ եմ, ահա՜, ահա՜, յետ եմ դառնում։

—Որ աղջիկ ես, ուրեմն գնա ձեր տուն, ձեր հաւերին կուտ տուր։ Տղամարդի հագուստ ունենալը բաւական չէ, պէտք է տղամարդի սիրտ էլ ունենալ։ Էլի լաւ էր որ ինձ պատահեցար և ոչ մի ուրիշին,՝ ասաց ձիաւորը և անյայտացաւ։

Աղջիկը դողդողալով վերադարձաւ տուն։

— Է՜... ո՞ւր է բերած որսըդ, հարցրեց հայրը, ինչո՞ւ այդպէս շուտ վերադարձար։

— Ճանապարհին ջերմս բռնեց, հայրիկ, գլուխս ցաւում է...

Մի՛ւս օրը միջնակին ուղարկեց։ Նա էլ մեծին պատահած փորձանքին հանդիպեց, նրա պէս վախեցած վերադարձաւ տուն։

Երրորդ օրը Արեգնազանին ուղարկեց։ Նրան էլ հանդիպեց միևնոյն ձիաւորը և ասաց —

Ա՛յ տղայ, սիրուն տղայ,
Ո՞ւր ես գնում այդպէս մենակ.
Ինչո՞ւ փափուկ անկողնիցդ
Դուրս ես եկել անժամանակ։

Արեգնազանը պատասխանեց բարկանալով.

Քեզ ինչ, թէ ես ուր եմ գնում.
Ուր գնում եմ, այդ ես գիտեմ.
Ես չեմ գնում, որ քեզ նման
Խաղաղ մարդոց ճանապէն կտրեմ։
—Ուրեմն ես աւազակ եմ։
Դու ես ասում ինձ այդ բանը,
Այս բոպէիս դու կոտանաս
Քո այդ խօսքիդ պատասխանը։
—Այո՛, թէ դու աւազակ ես,
Ցոյց է տալիս քո դիմակը.
Բայց թէ ինչպէս տղամարդ ես,
Այդ թող տեսնէ իմ նիզակը...

Այս ասելով՝ Արեգնազանը յարձակուեց նրա վրայ, ասելով.

— Դէն ձգիր դիմակդ, տեսնեմ դու ինչ մարդ ես, եթէ ոչ՝ այս բոպէիս կը թռցնեմ գլուխդ։

Ձիաւորն ընդդիմացաւ, վահանով պաշտպանուեց և թրով յարձակուեցաւ Արեգնազանի վրայ։ Արեգնազանը նոյնպէս պաշտպանվում էր վահանով և յարձակվում թրով։ Մի ժամ շարունակ տևեց նրանց կռիւը, և ոչ մէկը չկարողացաւ զարկել միւսին. զարկերը վահաններին էին դիպչում։ Միայն Արեգնազանը հետզհետէ զօրանում էր, իսկ նրա հակառակորդը թուլանում։ Վերջը Արեգնազանը մի ճարպիկ ոստիւնով թռաւ ձիուցը, իր հակառակորդի վողպատից բռնելով վայր գլորեց ձիուց, և հէնց այն է, ուզում էր, որ մի հարուածով գլուխը թռցնէր, նա իսկոյն վեր առաւ դիմակը...

—Ա՜խ, հայրիկ, հայրիկ, բացականչեց Արեգնազանը. այս ինչ փորձանքի մէջ էիր գցում դու ինձ... եթէ մի վոքր ուշ վեր առնէիր դիմակդ, ինձ հայրասպան պիտի շինէիր։

Հայրը մօտը նստեցրեց Արեգնազանին և նրա վրան նայելից չէր կշտանում։ Մի փոքր շունչ առնելուց յետոյ ասաց —

— Ապրիս, ապրիս, Արեգնազան,
Ծլիս, ծաղկիս, զօրանաս,
Հիմա գիտեմ, որ իմ տեղը
Դու անպատճառ կստանաս։

Ի զուր չեմ քեզ սորվեցրել
Ձէնք ու զրահ գործ ածել.
Ինքըդ գիտես, որ քոյրերիցդ
Քեզ սիրել եմ առաւել։

Թող սա լինի, ասացի ես,
Արու զաւակ ինձ համար,
Սորա անվախ, անահ սիրտը
Քաջ տղամարդի է յարմար։

Էլ աղջիկ չես այսուհետև.
Ձմռանաս այդ ընաւ.
Դու աշխատիր, որ ստանաս
Բարի անուն, մեծ համբաւ։

Արքայական ապարանքը
Մի մեծ բոյն է փորձութեան.
Եթէ սխալ մի քայլ անես,
Դու կորած ես յաւիտեան։

Այժմ գնա, դու իմ հոգեակ,
Օրհնութիւնս քեզ հետ տար,
Եղիր բարի, մեծահոգի,
Եղիր անմեղ ու արդար. . .

2.

Երբ որ Արեգնազանը ներկայացաւ թագաւորին և յայտնեց, որ ինքը Արմանի որդին է, թագաւորը շատ ուրախացաւ։

—Ես այնպէս էի կարծում, ասաց թագաւորը, որ մեր Արմանը հասած տղայ չունի։ Անունդ ի՞նչ է, տղա՛ս։

—Տէրութեանդ ծառայ՝ Արէգ։

—Արէ՛գ... շատ լաւ անուն է և քեզ բոլորովին յարմար։ Ուրա՛խ կաց, տղա՛ս, քեզ այստեղ լաւ կը պահեն։ Եթէ մի նեղութիւն, մի կարիք ունենաս, ինձ յայտնիր։ Վաղը պիտի որսի երթանք, դու էլ կը գաս ինձ հետ։

Թագաւորը միանգամայն մէկ աղջիկ ունէր Նունուֆար անունով։ Այնքան գեղեցիկ էր Նունուֆարը, որ «արեգակին ասում էր՝—դու մի դուրս գալ, ես եմ դուրս գալու»։

Երբ որ թագաւորը խօսում էր Արեգնազանի հետ, Նունուֆարը վարագոյրի ետևից թաքուն նայում էր նրա վրայ և զմայլում։

—Սա իսկ և իսկ այն պատկերն է, որին քանի անգամ տեսել եմ ես երազումս, ասում էր Նունուֆարն ինքն իրան...

Միւս առաւօտուն որսական փողերը հնչեցին։

Հազարից աւելի ձիաւոր դուրս եկան բոլորն էլ զինաւորուած լայնակամար նետաղեղներով, երկայնակոթ նիզակներով և այլ զէնքերով։ Իրանց հետ ունէին բազմաթիւ գամփռներ, բարակներ, բազէներ... մի խօսքով որսի ամեն պատրաստութիւնով։

Անցան գնացին, հասան մի լայնատարած դաշտ, չորս կողմից ահագին անտառներով շրջապատուած։ Որսական շներով անտառներից դուրս փախցրին բոլոր էրէնեբին դէպի դաշտ, շղթայաձև շրջապատեցին ամբողջ դաշտը, և բոլոր որսերին կալմէջ արած՝ սկսեցին անխնայ կոտորել։

Արեգնազանը թագաւորի մօտից չէր հեռանում, և նրանից էլ քիչ չէր կտտրում։ Որսասպանութեան այդ թունդ միջոցին թագաւորը մի եղջերուի ետևից ձին չափ գցելիս, ինչպէս պատահեց, վայր ընկաւ ձիուց, թէև անվնաս, միայն ձին խրտնեց փախաւ, թագաւորը մնաց յետ-ոտ և իսկոյն ընկաւ մի արջի առաջ։ Արջը ետևի ոտների վրայ կանգնեց, բերանը բաց արաւ և հէնց որ ուզում էր թագաւորին իր գիրկն առնել, ջարդել, Արեգնազանը մի ակնթարթի մէջ նետի պէս սլացաւ իր ձիով և թրի մի հարուածով կէս արաւ արջի գլուխը և վայր գլորեց ամեհի գազանին։ Թագաւորն ազատուեցաւ, և Արէգը դարձաւ նոյն օրուան հերոսը։

—Ա՜յ քեզ բախտ... ինչո՞ւ ես չէի մօտիկ թագաւորին... ասում էին որսորդներից շատերը...

Սոյն օրուան թագաւորին պատահած դէպքի լուրը շուտով քաղաք հասաւ և պատանի որսորդի արած քաջութեան համբաւը մի բոլէում տարածուեցաւ ամբողջ քաղաքի մէջ։

Տեսնելու բան էր, թէ ինչպիսի աղաղակ էին բարձրացնում քաղաքացիք որսորդների վերադարձին։

—Կեցցէ՛ թագաւորը, կեցցէ՛ քաջ Արեգը, գոռում էին միաբերան և երգում—

Ո՞վ է ազատել մեր թագաւորին
Արջի ճանկերից, հա՜յ, արջի ճանկերից.
Մեր քաջ Արէգը, սիրուն պատանին,
Նա է ազատել արջի ճանկերից,
Արջի ճանկերից, հա՜յ, արջի ճանկերից...
Երկայն նիզակը բերանն է կոխել,
Գլուխը թրով մէջ տեղից կիսել,
Ամեհի գազանին դետին կործանել,
Մեր թագաւորին անվնաս պահել
Արջի ճանկերից, հա՜յ, արջի ճանկերից։

Արէգն է սիրուն արեգակի պէս,
Նոր է դուրս եկել որսական Հանդէս,
Արջի գլուխը արաւ երկու կէս,
Մեր Թագաւորին ազատեց այսպէս
Արջի ճանկերից, Հայ, արջի ճանկերից...

Արէգն է դիւցազն, քաջ ու անվեհեր,
Կեցցէ յաւիտեան, կեցցէ շատ օրեր,
Եթէ նա այսօր այնտեղ չլինէր,
Մեր Թագաւորին էլ ո՞վ կազատէր
Արջի ճանկերից, Հայ, արջի ճանկերից...

Արեգնազանը այս ցոյցերը տեսնելով, ասում էր ինքն իրան.

—Ա՜խ, ի՜նչ լաւ բան է տղայ լինելը. երանի՜ ես ճշմարիտ տղայ լինէի: Աղջիկը ո՞րտեղից կարող էր այս պատուին արժանանալ...

—Դու այսօր ցոյց տուիր ինձ քո շնորհքդ, Արէգ, ասաց Թագաւորը. այսուհետև դու ինձնից անբաժան կըմնաս: Ապրի՛ս, տղա՛ս, ապրի՛ս: Դու մի հաղուագիւտ էակ ես. գեղեցկութեան և ջահելութեան հետ շատ հաշտ չէ քաջութիւնը, բայց Երկինքը քեզանով մի բացառութիւն է կազմել: Վաղը դու իմ ձիաներից կընտրես քեզ համար ամենալաւը, իմ զէնք ու զրահներից՝ ամենից ընտիրները: Դու ժամանակով դիւցազանց կարգը կընկնիս, և հէնց այժմ էլ մի փոքրիկ դիւցազն ես...

Թագաւորը շատ ուրախ էր, որ մի փոքրիկ դիւցազն է գտել, բայց Նունուֆարի ուրախութիւնը սահմանից անց էր կացել:

—Սրան Երկինքն է ուղարկել ինձ համար, ասում էր Նունուֆարը ինքն իրան. ամեն բան այնպէս է գնում, ինչպէս որ պէտք էր ցանկանալ: Բայց ես ի՞նչ պիտի տեսնեմ նրան երես առ երես, կամ նա ինձ ի՞նչ պիտի

տեսնի։ Ա՛խ, ինչքա՜ն ցանկանում եմ, որ հէնց այս բոպէիս նա ինձ մօտ լինի. մենք միասին կըխօսինք, ես նրան կասեմ... նա ինձ կասէ... Եւ ինչո՞ւ չկանչել, ինչու չխօսել։ Հայրս նրան 'որդու պէս է սիրում, որովհետև իր բարեկամի որդին է. նա ազատ ել ու մուտք ունի բոլոր պալատում։ Այո՛, այո՛, պէտք է կանչել։ Է՜յ, ո՞վ կայ այդտեղ։ Կանչեց Նունուֆարը, և նեբս մտաւ մի աղախին։

—Այս բոպէիս կերթաս Արէգի մօտ և կասես, որ գայ ինձ մօտ. ասա՝ «Ելկ, ինձ տես»...

Աղախինը գնաց և կանչեց Արէգին։

—Չեմ կարող գալ, պատասխանեց Արէգը։

—Ինչո՞ւ չէք կարող, պարոն. նա հրամայել է, պրնդեց աղախինը։

– Ես նրա մօտ գործ չունիմ, հասկանո՞ւմ ես։

-- Պարոն, նա ասում է. «Ելկ, ինձ տես»... հասկանո՞ւմ ես...

—Գնա ասա, «Ոչ կըգամ և ոչ կըտեսնեմ քեզ»...

Աղախինը գնաց։

Նունուֆարը Արէգի մերժումը լսելով՝ այնպէս սառաւ ու տաքացաւ, այնպէս կարմրեց ու սիրթնեց փոփոխակի, որ աղախինն այդ տեսնելով՝ սարսափի մէջ ընկաւ։

Նունուֆարի սիրտն ուզում էր տրաքել, գլխի սկաւառակն ուզում էր բարձրանալ։ Նա անդադար այս ու այն կողմն էր ընկնում, մերթ դուռն էր բաց անում, մերթ պատուհանը. նրա սենեակը դարձաւ մի հնոց և նրան այրում, խորովում էր։

—Մերժո՞ւմ... արհամարհա՞նք... ի՜նձ, ի՜նձ, ո՞հ, գըլուխս, գլուխս, տրաքում է, տրաքում...

Աղախինը տեսնելով իր տիրուհու անսահման սրտնեղութիւնը, վստահացաւ ասել.

—Տիրուհի, ես զարմանում եմ, որ դու մի այդպիսի դատարկ բանի համար սիրտդ շուռ ես բերում։ Նա դուցէ սատիկ ամաչում է, և դրա համար է, որ չեկաւ։ Երբ որ լսեց, որ դու կանչում՝ ես իրան, ամօթից կարմրեց, վարդ կտրուեց, և ինչքա՜ն գեղեցիկ էր...

—Սա՛, սա՛, խօսիր, շարունակիր, ես չլսեցի քո բոլոր սաածները... ո՜հ, որքա՜ն ատոր եմ ես հիմա նրա աչքումը, որքան ատոր... բայց նա սխալվում է, այնպէս չէ՞, նա սխալվում է...

Նունուֆարը երկար ժամանակ հոգեպէս տանջուելով՝ թուլացաւ և ընկաւ անկողին։ Թագաւորին իմաց տուին. նա դնաց տեսաւ, բժիշկներ կանչեց. հաւաքուեցան բոլոր բժիշկները, յոյս տուին թագաւորին, թէ հիւանդութիւնը վտանգաւոր չէ և շուտով կբբժշկեն, բայց դրա հակառակ, քանի դնաց՝ Նունուֆարի տկարութիւնը վտանգաւոր դարձաւ. բժիշկները յուսահատուեցան և ուղղակի յայտնեցին, որ չեն կարողանում իմանալ ոչ ցաւի պատճառը և ոչ նրա բժշկելու հնարը։

Շատ տխրեց թագաւորը։ Նունուֆարը նրա միակ զաւակն էր, միակ մխիթարութիւնը, իր թագաւորութեան միակ ժառանգուհին։ Ամբողջ պալատը և համարեա ամբողջ քաղաքը տխրութեան մէջ ընկաւ։ Արեգնազանն էր միայն անտարբեր մնացողը։ Նրա հոգը չէր ամենևին, և չէր էլ երևակայում, որ ինքն է նրա տխրութեան միակ պատճառը։

Նունուֆարին փոքր ի շատէ սփոփողը և ուրախ տրամադրութիւն տուողը թագաւորի ծաղրածուն էր, իսկ նրա վրայ հսկողն ու խնամք տանողը վէզիրի կինն էր։

Վէզիրի այրի կինը մի հասած տղայ ունէր։ Նա կարծում էր, որ թագաւորին արժանաւոր փեսացու միայն իր տղան կարող է լինել և ոչ մի ուրիշը։ Այդ պատճառով նա դիշեր ցերեկ չէր հեռանում Նունուֆարի մօտից. աշ-

խատում էր նրան առողջացնել և միևնոյն ժամանակ նրա սէրը գրաւել։

—Տիրուհի, ինչ կըտաս, որ ես քեզ բժշկեմ, ասաց մէկ երեկոյ ծաղրածուն։

—Ինչ պիտի տամ, յիմար, եթէ մի հնար դիտես, էլ որ օրուան համար ես պահում։

— Այդ լաւ ասացիր. ինձ պէս յիմարին ով բան կըտայ. ուրիշ բան է, եթէ ես մի յիմար բժիշկ լինէի։ Սպասիր, ես պիտի տեսնեմ քո խելքդ դլխումդ է, թէ քեզանից խռովել է, դնացել է ուրիշի դլուխ մտել։

— Այդ ինչպէս պիտի իմանաս։

- Ա՛յ ինչպէս։ Եթէ տասնից երկու պակասեցնես, կարող ես էլի նոր մէկանց տասը շինել։

—Ինչո՞ւ չէ. տասնից կրպակասեցնենք երկու, կըդառնայ ութ, ութի վրայ երկու կաւելացնենք, կըդառնայ էլի տասը։

—Այդ ինչպէս կարելի է. տասնից որ երկու դՀլես, էլ ինչպէս կարող ես կպցնել նրան։ Հիմա որ քո մի կուռը կտրենք, մէկ էլ նոր մէկանց տեղը դնենք, կըկպչի.։.

— Այդպէս չէ, յիմար։ Եթէ դու ունենաս տասը խընձոր, նրանցից երկուսն ուտես, տեղը չի՞ մնալ ութը։ Հիմա այս տիկինը, որ քեզ երկու խնձոր տայ, դու կաւելցնես մնացած ութի վրայ, էլի կունենաս տասը խնձոր։

—Հա՛, Հիմա Հասկացայ։ Ուրեմն դու այնպէս ես Հաշվում, որ կերած խնձորների տեղ կարելի է ուրիշ խընձորներ դնել։

—Ի Հարկէ, կարելի է։

—Իսկ ես այնպէս էի կարծում, թէ կերածը կերած է, կորածը կորած, մեռածը մեռած, էլ դրանք յետ չեն դառնալ։ Ուրեմն այս տիկինն ինչո՞ւ է մէկ մնացել։ Սա մէկ մարդ ունէր, մեռաւ. առաջ սա և իրան մարդը երկու էին. Հիմա եթէ սրա վրայ ուրիշ մէկ մարդ աւել-

ցնենք, խօմ էլի կրդառնայ երկու։ Բայց առաջուան մէկը վէղիր էր, ողորմի իրան, խելօք մարդ էր կարծվում. երկրորդ մէկը թող լինի մէկ յիմար կարծվող ծաղրածու։ Այս հանգամանքը խօմ մեր հաշուին չի դիպչիլ. տիկինը, որ հիմա մէկով պակաս է, առաջուան պէս կրդառնայ երկու...

—Դու իմ հոգսը մի քաշիր, յիմար, ասաց տիկինը. դեղ գիտես, քո տիրուհուդ համար արա. թող ես մէկ մնամ...

—Տիկին, իմ տիրուհին մէկ է, սրան ուրիշ մէկ չի պակասել, բայց ուզում է երկու դառնալ։ Ես հիմա մտածում եմ, որ սրա համար մի այնպիսի մէկ գտնեմ, որ եթէ սրա վրայ աւելացնենք, դառնայ էլի մեր առաջուան նունուֆարը։

Ծաղրածուն մատը ճակատին դրաւ և մի փոքր մըտածելուց յետոյ բացականչեց—Գտա՛յ, գտա՛յ... և սկսեց երգել—

Մէկ,—ըէգ, մեր Արէգ.
Հորս,—մորս, գնաց որս.
Վեց,—նեց, ըսպանեց
Մի արջիկ, մի աղջիկ...

Ես հաշուեցի և գտայ
Մեր պալատում մի տղայ,
Նրան տեսնող աղջիկը
Խելքը հացով կուլ կրտայ։

Ես յիմար եմ, միշտ յիմար,
Ինձ ո՞վ կասի, թէ գտար
Իմ սիրելի տիրուհու
Ցաւի համար դեղ ու ճար։
Եարալլալի, շարալլալի,
Հայդէ, յիմար, դուրս արի...

Երգեց յիմարը և մի քանի ոստիւններ անելով՝ դուրս փախաւ...

Վէզիրի կինը «մատը կծեց», և ընկաւ մտատանջութեան մէջ: Ես հիմա հասկացայ ամեն բան, ասաց իր մտքումը: Յիմարն իմ հաշիւը տակնուվրայ արաւ: Զատ լաւ. քո Արէգին մի այնպիսի տեղ ուղարկեմ, որ «գնալն ըլի, դալը չըլի»...

—Մեր յիմարն այնքան յիմար չէ, ինչքան կարծվում է, ասաց տիկինը Նունուֆարին:

—Այո, բայց այս անգամ շատ յիմարացաւ, պատասխանեց Նունուֆարը:

Միւս առաւօտուն ամենից կանուխ վէզիրի կինը գընաց Թագաւորի մօտ:

—Ի՞նչ կայ, ինչպէս է աղջկանս առողջութիւնը. հարցրեց Թագաւորը:

—Էլի այնպէս է, տէր Թագաւոր, ինչպէս տեսել ես, բայց ես եկել քեզ մի ուրախաւէթ լուր հաղորդելու:

—Ի՞նչ լուր, ասա շուտով, գուցէ իմ աղջկանն է վերաբերում, ուրիշ ոչ մի լուր ինձ չի կարող ուրախացնել:

—Այո, այո: Այս գիշեր երազումս երևաց մեր Թագուհին և ասաց ինձ, որ Նունուֆարի միակ դեղը «անմահական ջուրն է»:

—Ան-մա-հա-կան ջուր... բացականչեց Թագաւորը. բայց ո՞վ կարող է բերել այդ անմահական ջուրը, որի միայն անունն ենք լսած, իսկ իրան չենք տեսած:

—Ես հարցրի այդ մասին Թագուհուն և նա ասաց, որ միայն Արէգը կարող է բերել...

—Արէգը... լաւ. ես կուղարկեմ Արէգին, թող երթայ իր բախտը փորձէ...

Թագաւորը կանչեց Արէգին և առաջարկեց նրան գնալ անմահական ջրի:

—Գնա՛, տղաս, եթէ կարողանաս այդ ջրից բերել և իմ աղջկանս առողջացնել, ես նրան քեզ կրտամ և նրա հետ իմ թագաւորութիւնը։

—Այդ խոստումն էլ որ չլինի, տէր արքայ, ես պատրաստ եմ հնազանդիլ քո հրամանին. դու ինձ ասա միայն որտեղ է գտնվում այդ անմահական ջուրը։

—Նրա տեղն ո՞վ կիմանայ, որդի։ Նա մի առանձին պարգև է, մի առանձին ողորմութիւն և շնորհք, որ բարի Ոգիները միայն իրանց ընտրածին են տալիս։ Թէպէտ լսած ենք, որ նա մի աղբիւր է, որ նրա վրայ հրսկում են աներևոյթ ոգիները, որ նա երբեմն բղխում և երեմն անյայտանում է, բայց այդ ո՞վ գիտէ։ Դու երեսդ կդարձնես դէպի արևելք, կընկնիս երկրէ երկիր, աշխարհքէ աշխարհք, ամեն տեղ հարց ու փորձ կանես, կամ կգտնես, կամ չես գտնիլ, այդ քո ճակատագրիցը, քո բախտիցն է կախուած. բայց ինչ էլ որ լինի, յաջողութիւն, թէ անյաջողութիւն, դու շատ բան կրտեսնես և շատ բան կրսովորես։ Իմ գանձարանը բաց է քեզ համար. որքան կարող ես, հետդ ոսկի և ակնեղէն վերցրու. շատ տեղ հարկաւոր կրգայ...

3.

Արեգնազանը գնաց։

Զարմանալի մի էակ էր Արեգնազանը. միշտ աշխոյժ և զուարթ, միշտ անահ և անհոգ. նեղութեան մէջ ընկած ժամանակն ևս իր ուրախ տրամադրութիւնը չէր փոխում։ Նա գնաց իր Բազիկ ձիով, որ երեք-չորս օրուան ճանապարհը մէկ օրումն էր անցնում։ Նա պտրտեց միքանի թագաւորութիւն. շատ տեղ հարց ու փորձ արաւ, շատ բան տեսաւ, շատ նեղութիւններից ազատուեցաւ, մինչև հասաւ Կախարդական աշխարհը, ուր ամեն մի քայ-

լափոխում մի նոր հրաշք էր տեսնում, մի նոր զարմանալիք։

Մէկ օր սաստիկ արև էր։ Ձոգը որ շատ նեղեց Բազիկին, Արեգնազանը իջաւ մի լճի մօտ, Բազիկին քաշեց կապեց մի խիտ ստուերի մէջ, ինքն էլ մօտը նստեց, հանեց իր ճամպի պաշարը և սկսեց ճաշել։ Հէնց այդ միջոցին մէկ էլ տեսաւ, որ ահա մի խումբ աղաւնիներ թռած եկան և իջան լճի ափին՝ իրանից շատ մօտիկ։ Նետաղեղը լարեց, որ մի որս անէ, մէկ էլ տեսաւ, որ բոլոր աղաւնիները հանեցին փետուրները և աղջկերք դառնալով թափուեցան ջուրը լողանալու։

Արեգնազանը մնաց ապշած մի րոպէ, յետոյ մտածեց նրանց հետ մի խաղ խաղալ և տեսնել ինչ կըլինի հետևանքը։ Կուզէ-կուզ մօտեցաւ ափին, այնպէս որ իրան չտեսան, վերցրեց նրանց մէկի փետուրները։ Երկու մեծ թև էր աղաւնու, մնացած փետուրներն էլ վրան։

Զանցաւ մի քանի րոպէ, բոլոր աղջիկները դուրս եկան, հագան իրանց թևերն ու թռան, բայց մէկը, որ իր թևերը չգտաւ, ամաչեց մերկ կանգնել ջրի ափին, իսկոյն իրան գցեց ջուրը։ Արեգնազանն այդ նկատելով թեւերը ձեռին մօտեցաւ աղջկանը։ Աղջիկը ջրումն ընկրդմուած, միայն գլուխը դուրս հանած, մօտեցաւ Արեգնազանին և սկսեց երգել—

Ա՛յ տղայ, սիրուն տղայ,
Թևերըս տուր, թևերըս,
Թևերըս տուր, թռչիմ գնամ,
Ինչ կամենաս, քեզ կրտամ։

Իմ օրումս չեմ տեսած
Քեզ պէս սիրուն մի տղայ,
Այդքան գեղեցկութեան մէջ,
Սիրտ չի լինիլ անզգայ.

Խնայիր ինձ, աղաչում եմ,
Թևերիս տուր, թևերիս,
Թևերիս տուր, թռչիմ գնամ,
Ինչ կամենաս, քեզ կըտամ։

Եթէ իրաւ տղայ ես,
Կուզեմ դառնաս դու աղջիկ,
Որ քո սեռում չլինի
Քեզ հաւասար գեղեցիկ.
Տես, ահա ես քեզ օրհնում եմ.
Թևերիս տուր, թևերիս,
Թևերիս տուր թռչիմ գնամ,
Ինչ կամենաս, քեզ կըտամ։

Աղաւնի աղջիկը լռեց, և վիրը ծռած, մի ամենաքնքոյշ ժպիտ բերանին՝ նայում էր Արեգնազանին և սպասում, որ իր թևերն ստանայ։

Արեգնազանին այնքան դիւր եկաւ Աղաւնի աղջկան երգի եղանակը, որ ասում էր «ոչ ուտեմ, ոչ խմեմ, սա երգի, ես լսեմ»...

—Զարունակիր, շարունակիր, մի քիչ էլ երգիր, խնդրեց Արեգնազանը։ Քո երգն ինձ շատ է դիւր գալիս. դեռ այդպէս բան լսած չկամ կեանքումս։ Միայն մի բան ես չհասկացայ, սիրուն աղջիկ։ Դու ասում ես «Եթէ տղայ ես, աղջիկ դառնաս». այդ ինչպէս կարելի է։

Աղջիկը շարունակեց երգել։

Ամենայն ինչ կարելի է,
Ոչ մի դժուար բան չկայ.
Եթէ իրաւ աղջիկ դառար,
Հիմա դարձիր քաջ տղայ։
Թող երեսիդ մօրուք բուսնի
Թուխ ու երկայն բեխերով,

Թող կոշտանայ սիրուն դէմքդ
Հաստ ջիղերի գծերով։

Ո՜հ, տեսնում եմ, դու փոխվում ես...
Թևերդս տուր, թևերդս,
Թևերդս տուր, թռչիմ գնամ,
Ինչ կամենաս, քեզ կրտամ։

Մի վայրկենական ուշաթափութիւն եկաւ Արեգնազանի վրայ, և նա զգաց մի անսովոր բան, բայց շատ հաճոյական։ Նայեց ջրի երեսին, ուր՝ ինչպէս հայելու մէջ՝ պատկերացաւ մի դէմք, բոլորովին Արեգնազանին նման, միայն նորածիլ բեխերով ու մօրուքով։ Այդ պատկերը առաջ մի քիչ խորթ թուաց Արեգնազանին, բայց յետոյ այնքան զմայլելի եղաւ, որ վերան նայելից չէր կշտանում։ Այս ես կըլինիմ անպատճառ, ասաց ինքն իրան։ Ես հիմա ճշմարիտ որ Արէգ եմ։

—Սիրուն աղջիկ, դու տուիր ինձ այն, ինչ որ իմ միակ ցանկութիւնս էր. այժմ դու ազատ ես. ես չէի սպասում քեզանից այսպէս բան. ուրեմն դու ինձ կասես, դու անպատճառ կիմանաս, թէ որտեղ է գտնվում անմահական ջուրը, որի համար ես ահա քանի ժամանակ է թափառում եմ։

Աղջիկն սկսեց երգել։

Թող նունուֆարդ ուրախանայ,
Որ ճանկ գցեց քեզ պէս փեսայ,
Հիմա հասար քո մուրազին,
Եկար ահջիկ, կերթաս տղայ։

Անմահական ջո՞ւր ես ուզում...
Թևերդս տուր, թևերդս,
Թևերդս տուր, թռչիմ գնամ,
Եւ իմ կտցով բերեմ տամ։

Գնա օգնիր տկարներին,
Հոգի ու շունչ տուր քարերին.
Թէ որ կուզես ինչպէս Հիմա,
Մնալ փոխուած ինչպէս տղայ,
Իսկ եթէ ոչ, լաւ գիտենաս,
Որ տղայից քար կըդառնաս,
Երբ քարացած քաղաքի մէջ
Կախարդ կնկան կրմօտենաս։

Թևերըս տուր, Թևերըս,
Թևերըս տուր շուտ հագնեմ,
Թռչիմ գնամ և քեզ համար
Անմահական ջուր բերեմ...

Աղջկան վերջին խօսքերից շատ բան չՀասկացաւ Արէգը, բայց չուզենալով այլևս ուշացնել նրան, Թևերը տուաւ իրան։ Աղջիկը Թևերը հագնելուն պէս դարձաւ աղաւնեակ և Թռաւ գնաց։ Մի քանի բոպէ չանցած՝ մի փոքրիկ շիշ կացին, անմահական ջրով լիքը՝ բերաւ Արէգին տուաւ և ինքը կրկին Թռաւ գնաց։

Արէգը ձին հեծաւ և ճանապարհ ընկաւ՝ ձիու հետ խօսելով։

—Բազիկ, ես հիմա տղայ եմ, գիտես, էլ աղջիկ չեմ։ Առաջ աղջիկ էի. այդ ոչ ոք չգիտէր. դուցէ դու էլ չգիտէիր. հայրս պատուիրել էր, որ ոչ ոքի չասեմ, Թէ ես աղջիկ եմ. բայց հիմա տղայ դառայ։ Օ՜, որ գիտենաս, Բազիկ, ինչքան ուրախ եմ հիմայ։ Դու չես իմանում. Թէպէտ աղջիկն էլ լաւ է, բայց տղային որտեղ կըՀասնէ։ Ես հիմա չգիտեմ ուր եմ գնում, Բազիկ. դու ինքդ գնա՝ որ կողմ կուզես. այսուՀետև ինձ համար միևնոյն է... Բայց սպասիր, ես մի աշտարակի ծայր եմ նշմարում, նա անպատճառ մի քաղաք կըլինի, գնանք դէպի այն կողմը։ Զարմանալի ահոգ եմ ես, Բազիկ. մէկ չես ասում,

թէ ինչո՞ւ այդ իմաստուն աղջկանը չհարցրիր, թէ՝ ով դու գեղեցիկ և իմաստուն աղջիկ, ո՞ր կողմով պիտի յետ դառնամ ես իմ աշխարհքը։ Դեռ լաւ էր որ նա առանց իմ ասելուն՝ ինձ տղայ դարձրեց. որ բանն ինձ մնար, ես դեռ էլի աղջիկ կըլինէի։ Ի՞նչ կարող էի մտածել, որ այդպէս բան կարող է պատահել։ Բայց երբ որ տեսայ, թէ այդպէս բան լինում է, ինչո՞ւ չասացի՝ սիրուն աղջիկ, ինձ որ տղայ դարձրիր, մեր Բազիկին էլ մարդ դարձրու, կամ եթէ ոչ, զոնէ խօսելու ձիրք տուր, հը՞, ինչ կասես, Բազիկ։ — Ոչինչ, դու տղայ դառար, ես էլի մնացի ձի։ — Իրաւ, իրաւ, այդ լաւ չեղաւ։ Մի բան տեսնելիս այնպէս յափշտակվում եմ, որ լոլոր մնացած բաները մոռանում եմ. յետոյ միտս է գալիս, բայց ուշ է լինում...

Այսպէս ձիու հետ խօսելով և նրա փոխանակ ինքը պատասխանելով՝ մեր վերանորոգուած Արէգը դիմեց դէպի երևացող աշտարակը։

Ղ. ԱՂԱՑԵԱՆՑ

(Կըշարունակուի)



ԱՐՔԱՅՆ ԼԻՐ

ԿԱՄ

ԱՊԵՐԱԽՏ ԱՂՋԻԿՆԵՐ

Պառաժոտ լեռների մէջ
Ամպ է իջել սպառնալից,
Ոլոտաձայն նա գոռում է,
Կայծակներով լիքը ծոցից։

Մրընչելով յանկարծ քամին,
Տապալում է մեծ-մեծ ծառեր,
Երբ շանթերը շառաչելով
Տալիս են խուլ արձագանգներ։

Այդ տարերաց կրռիւին մէջ,
Խորդ ու ժայռոտ լեռան վրայ,
Մի ծերունի թափառական
Արցունք թափէ, անէծք գոռայ։

Պատառոտուն նորա զգեստ,
Մազն ու մօրուք խառն, սպիտակ,
Ծածանում են քամու շնչից,
Իւր աղէտքին իբրև դրօշակ։

Արքայ լիր, որ անիծում է իր՝ կրտսեր աղջկանը Կորդելիային։

Չէ կարելի զանազանել
Ո՞րն է աւել զարհուրելի,
Շառաչիւնն այն կայծակների,
Թէ ծերուկին ողբ ցաւալի։

Իւրաքանչիւր նորա կոծին,
Մասնակցում են կարծես ամպեր,
Որոց կրբակն էլ չէ կարող
Ցամաքեցնել իւր արցունքներ։

Նրա ընկերն է մի խեղճ միմոս,
Որի արցունքն ունի ծիծաղ,
Որի համար վիշտ ծերունուն
Սովորական թրւի մի խաղ։

Եթէ կամիք դուք ճանաչել,
Իմ ընթերցող ազնիւ տղերք,
Թէ ո՞վ է այն խեղճ ծերունին,
Որի ողբից զոզան տարերք,

Ահա ասեմ. այն խղճալին
Մի արքայ էր շատ զօրաւոր,
Իւր սրքունիք, հարստութիւն
Փարթամ էին և փառաւոր։

Բայց երբև ցեցք իւր ծերութեան՝
Ունեցաւ նա չար աղջկերք,
Որք բարութեանց իւր փոխարէն՝
Տրին նորան դառնագին վերք։

Նախատեցին արտաքսելով
Նոքա իրանց հօր՝ ծընողին,
Ցնորուեց նորա գլուխն ալևոր՝
Իսպառ կորաւ թագն էլ անգին։

Խելակորույս

Արքայ Լիր

Այժմ յուսահատ դաշտից 'ի լեռ
Ման է գալիս խարխափելով,
Փիլիսոփայ լեր մեմոսի
Կրծքին վրայ թեք ընկնելով։

Սակայն չի կոյ չար որդկերանց
Այս աշխարհքում երջանկութիւն.
Չի ծընողաց վիշտն ու անէծք
Կչորացնեն նոցա արիւն։

Եւ այդ աղջկերց երկուսն էլ,
Որք տանջեցին իրանց խեղճ հօր,
Թշուառացան. և սուգի մէջ
Փառանդեցին մահ ու սև օր։

Նորա միայն երրորդ դուստրը,
Որ խնամեց հօրն յուսազար,
Արդ երկնքում նորա կողքին,
Ողջողում է ատոդի պէս վառ։

ՊԵՏՐՈՍ Հ. ԱԴԱՄԵԱՆ



ՉԿՆՈՐՍՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԸ

(Ֆրանսերէնից)

Ինչպէս չէ՞, դուարթ է այս փոքրիկ աղջիկների դէմքը, որոնք իրար ձեռքից բռնած շրջան են կազմում: Ահա այնտեղ էլ ուրիշ աղջկերք, որոնք վազելով գալիս են սրանց հետ պարելու:

Սրանք դաշտումն են, տների յետևում: Ահա մի բարի կով հանգարտ նայում է նրանց:

Բայց խնդրեմ, նրանց հագուստին նայելով, դուք դուշակեցիք, այնպէս չէ՞, որ նրանք մեր երկրի երեխաներ, փոքրիկ ֆրանսուհիներ չեն:

Նրանք մեր լեզուով չեն խօսում. եթէ դուք նրանց հետ խօսէիք, նրանք ձեզ չէին հասկանայ. եթէ նրանք էլ ձեզ հետ խօսէին, դուք նրանց չէիք հասկանալ: Բայց, եթէ ձեռք մեկնէիք նրանց հետ պտույտ անելու, մեծ ուրախութիւնով նրանք կրպասէին ձեզ հետ, որովհետև երեխաների խաղերն ու պարերը նոյնն են ամեն տեղ:

Սակայն, դեռ քննենք նրանց փոքրիկ հագուստը, որ մեզ այնպէս ծաղրական է երևում՝ բայց և գեղեցիկ միևնոյն ժամանակ։ Ամենից առաջ ես նկատում եմ, որ նրանք շատ տաք են հագնուած. բոլորի գլուխն էլ ծածկուած է. ոտներին՝ լաւ մեծ-մեծ տրեխներ. և ինչ լաւ փաթաթուած են նրանք իրանց փոքրիկ, փափուկ կարուած և մինչև վիզը կոճկուած բռճկոնակներում. այն ու տաք շրջազգեստներում, որոնցից չորսը կամ հինգը հագել են միմեանց վրայ։

«Գուցէ, ցուրտ երկիր է նրանց երկիրը, մտածում է քո՛ւք»։ Լաւ գուշակեցիք։

— Այստեղ մանաւանդ քամի է լինում, սաստիկ քամի, միշտ քամի...

Ես այս բոլէիս կասեմ ձեզ ինչո՞ւ։

Մինչ այն, նայեցէք դարձեալ մեր փոքրիկ պարողներին։ Նրանց խիտ, շէկ մազերը թափվում են առաջից ճակատի վրայ, տարածվում են ետևից՝ ուսերի վրայ, իսկ

երկու կողմից՝ կախ են ընկնում երկու մեծ ծամեր։ Նրանց փոքրիկ գլխանոցը սպիտակ կտորից է՝ ճակատի վրայ, իսկ ետևից կարմիր բանուած մահուդով երկպատկուած։ Նայեցէք էլի այս սպիտակ կամ կապույտ բաճկոնակին՝ զարդարուած ասեղնագործերով, մեծ, սպիտակ կամ կարմիր ծաղիկներով, քաղանկիւնի նկարներով՝ շրջազգեստը կանաչ է կամ մանիշակագոյն...։

Ա՜, այդ նրա համար է, որ այդտեղ վայլուն և ուրախ գոյները շատ են սիրում։ Փոքրիկ գուլպաները տրեխների մէջ, նոյնպէս կարմիր են կամ մոյդ կապոյտ։ Նրանց կռները ծածկուած են բրդից գործուած կոնամաններով՝ կապոյտ կամ մոյդ գոյնի։ Մի տեսէք այս մէկին, որ իր փոքրիկ շրջազգեստները հաւաքել է մի տեսակ ուռած մեծ անդրավարտիքում. նա ձեռքը դրել է իր փոքրիկ դրպանի մէջ, երևի մրսկոտ է։—Դէհ, շուտ պարէք, փոքրիկ աղջիկներ, որ չմրսէք։—Ձրջա՜ն կազմենք, շրջա՜ն։ Ո՞վ կերգէ երգը։

Երգի խօսքերը համարեա այս են.

Ծիծեռնա՜կ, ծիծեռնա՜կ.
Փոքրիկ ծիծեռնակը
Թռչում է, թռչում է, թռչում իր տան շուրջը,
Ճռուողելով՝ «Ռիւ՛, ռիւ՛, ռիւ՛.
Ես եմ, փոքրիկ ծիծեռնակը՜»։

Դեռ էլի կան ուրիշ երգեր։

Բայց ինչներիս են պէտք երգի խօսքերը, այնպէս չէ՞. միայն թէ եղանակը լինի ուրախ և թռչկոտեցնող։

Բայց ո՞ւր են մայրիկները, երբ փոքրիկ աղջիկները թռչկոտում ու զուարճանում են մեն-մենակ դաշտումը։

Մայրիկները հեռու չեն։ Նրանք այստեղից մօտիկ տներումն են. և գիտեն որ իրանց աղջիկները ապահով են դաշտումը։

Նրանք՝ մայրիկները, զբաղուած են տնտեսութիւնով. տունն ալրում են, ճաշ են պատրաստում իրանց սիրելի երեխաների համար. նրանց փոքրիկ հագուստներն

են կարում, կարկատում. մայրիկները միայն իրանց երեխաների վրայ են մտածում.—Ես կրցանկանայի ձեզ ցոյց տալ նրանց տունը, թէ նա ինչպէս մաքուր է և գեղե-

ցիկ։ Առաջինը՝ նա փայտից է շինուած։ Ինչո՞ւ. որովհետև այդտեղ քարը սակաւ է։ Տունը շինուած է մեծ ցիցերով, որոնք խրուած են հողի մէջ, և նրանց վրայ մեխուած են տախտակներ, որ պատի տեղ են ծառայում։ Կտուրը նոյնպէս տախտակից է։ Ներսը՝ սիրուն կարասիներ կան քանդակուած և փայլուն՝ անդադար սրբուելուց։ Պատերի զարդն է, պատկերների փոխարէն, գեղեցիկ ֆայեանսի սկաւառակներ, որ մաքրութիւնից շողշողում են և որոնց վրայ նկարուած են կարմիր, կապոյտ, դեղին մեծ ծաղիկներ և կանաչ տերևներ։ Ֆայեանսի ծաղկամանները, սպակեղէնը շարուած են թարէքների վրայ. կաթսաները, խոհանոցի պատկանելիքը՝ ոսկու պէս պսպղում են։ Սենեակի մէջ տեղ աղիւսեայ կրակարանն է, լաւ վառուած կրակով լի, երեխաների թմրած ձեռները տաքացնելու համար, երբ նրանք կըվերադառնան. և այն ժամանակ մայրիկը նրանց կընստացնի կրակարանի շուրջը, փոքրիկ փայտեայ նստարանների վրայ, ուր նրանք կընթրեն։

Իսկ փոքրիկ տղաներն ո՞ւր են, հարցնում էր ինձ նախընթաց երեկոյ մի երեխայ՝ այս պատկերին նայելով։

— Փոքրիկ տղաները, սիրելիս, իրանց հօր հետ են։

— Իսկ հայրերը ո՞ւրտեղ են։

— Հեռու, դուցէ շատ հեռու...։ Ես կըբացատրեմ ձեզ այդ։

Տեսնում էք, այնտեղ, տների յետևում, մեծ կայմեր, ինչեցրած առաղաստներ, պարաններ. դրանք մեծ նաւեր են, որոնք ամբողջովին չեն երևում, որովհետև ցամաքը նրանց ծածկում է. բայց երևում են նրանց կայմերը և առաղաստները։

Այն դաշտի ծայրին, ուր երեխաներն էին խաղում, ծովն է, մեծ ծովը։ Այս երկիրները ծովային երկիրներ են, և այնտեղ բնակուող մարդիկները, ծովային մարդիկներ...։

Շատ հետաքրքրական է այս երկիրը. միանգամայն հարթ է նա որպէս ահագին դաշտ։ Ո՛չ մի լեռ, ո՛չ մի բլուր չկայ այդտեղ։ Երկրի երեսը այնքան միահաւասար ու այնքան ցածր է, որ ծովը և գետերը նրան կըծածկէին ու կըհեղեղէին, հետևապէս մի մեծ լիճ կըդառնար նա, եթէ չլինէին այն արգելառիթ՝ խոչերը, որոնք պահում են ջրերին. դրա համար էլ այս երկիրը կոչվում է Ցածր-Երկիր, կամ Հոլլանդիա, որը նոյն նշանակութիւնն ունի բնակիչների լեզուով։ Նրա մէջ կան քաղաքներ, մեծ քաղաքներ մինչև անդամ, գեղեցիկ տներով, սիրուն պարտէզներով. կան մշակուած դաշտեր, ադարակներ, նամանաւանդ գեղեցիկ մարգագետիններ, ահագին մարգագետիններ, ուր արածում են ձիեր, կովեր, գառներ։ Բայց ծովեզրին, այսինքն ծովի ափին, ո՛չ դաշտ կայ, ո՛չ էլ ադարակ. մարդիկ այդտեղ երկրագործ՝ երկրի մարդիկ չեն. այլ ծովի մարդիկ՝ նաւաստիներ, ձկնորսներ են։

Մի քանիսը ծովի վրայ հեռու, բաւական հեռու են գնում, երկար ճանապարհորդութիւններ են անում նաւերի վրայ։ Դրանք շատ ուշ են վերադառնում. երբեմն ամիսներով, երբեմն տարիներով մնում են առանց վերադառնալու. և այդ ժամանակամիջոցում կինը մնում է մենակ տանը, փոքրիկ երեխաների հետ, որ այնքան երկար մնում են առանց իրանց հօրը տեսնելու։ Երբ նա վերադառնում է, փոքրիկները հազիւ են նրան ճանաչում։

Ձկնորսները այնքան հեռու չեն գնում։ Նրանք ունին նաւեր, բայց ոչ մեծ նաւեր։ Իւրաքանչիւր գերդաստան ունի իր ձկնորսութեան նաւը։ Հայրը ամեն օր, վաղ առաւօտեան գնում է իր որդկերանց կամ մի երկու դրացիների հետ, որոնք նրան օգնում են թիաւարելում կամ ձուկ որսալում։ Նրանք դիմում են ձկնորսութեան համար դէպի յարմար տեղ, երբեմն ափից մօտ, երբեմն

էլ մի քանի մղոն հեռու, բաց ծովում, ինչպէս ասում են, այնքան հեռու, որ էլ ցամաքը չի երևում։ Այդտեղ, ջրի մէջ են նետում ահագին, երկար ու լայն ուռկանները,

որ բաւական տարածութիւնով տեղ են բռնում. ապա ուռկանը հանում են նաւը. յիշեալ տարածութեան մէջ գտնուած ձկները ցանցերից էլ չեն աղատուիլ. նրանք

արդէն բռնուած են։ Նաւակի մէջ են ածում նրանց և էլի շարունակում։ Ա՜խ, շատ տաժանելի է ձկնորսների արուեստը, սիրելի երեխաներ։ Պէտք է անդադար դէպի հողմը ուղղել նաւակը, քարշել պարանները. թիավարել, երբ քամի չկայ, հանել ջրից, մեծ դժուարութիւնով, դրրկած բազուկների մէջ՝ ծանր, բոլորովին թրջուած ուռկանները, որոնցից տակաւին ջուրը ծլծլում է։

...Ո՜հ, ինչ ծանր է այդ, ցուրտ եղանակին, երբ ջուրը սառած է և քամին անդադար փչում է՝ ծովային քամին, որ ձեր երեսին է նետում աղի անձրև։ Հագուստները թրջուած, միշտ ջրի մէջ և յաճախ էլ ոտաբոբիկ, ահա ձկնորսների կեանքը։ Ամռէջ օրը որսում են. երեկոյեան մօտ ձուկը ցամաք են հանում, որ պէտք է վաճառանոցում ծախեն։

Բայց շատ պատահում է, որ ձկնորսները անցնում են դիշերը ծովի վրայ. նրանք աշխատում են, նետում են ծովի մէջ ուռկանը, կամ քնում մի քանի ժամ նաւակի յատակի վրայ, առանց ուրիշ ապաստարանի. սառապատները վերմակի տեղ են ծառայում։ Շատերն այսպէս անց են կացնում ամբողջ շաբաթը ծովի վրայ և վերադառնում գիւղը միայն կիւրակէ։ Ո՜հ, շատ տաժան է ձկնորսների պարապմունքը. այնպէս չէ՞։

Հէնց որ տղաները եօթը տարեկան դարձան, հայրերը իրանց հետ են վերցնում նրանց, ձկնորսութեան օգնելու և նրանց արուեստը սովորելու։ Սրանք էլ թիավարում են, մագլցում են թոկերի վրայ, օգնում են ուռկանը հանելում, ձուկը կողովների մէջ դարսելում։ Եւ ահա՛ ինչու այս պատկերի վրայ, ուր փոքրիկ աղջիկները պարում են, չէք տեսնում փոքրիկ տղաներ։

Հիմայ նայեցէք, այս մի ուրիշ պատկերի վրայ։ Ո՞վքեր են այս նստարանների վրայ նստած խեղճ ծերունիները։ Սրանք սլեռոր պապերն են։ Սրանք արդէն ծերա-

ցած լինելով՝ էլ չեն կարողանում ծովային ճանապարհորդութիւն անել, էլ նրանք ոյժ չունին թիավարելու, որսալու, այլ մնում են ցամաքի վրայ կանանց ու երեխաների հետ։ Նայեցէք, նրանցից ամենից մեծը, ննջել է յոգնութիւնից։ Միւսները խօսակցում են միմեանց հետ։ Այ, մէկն էլ ծխամորչն է քաշում, որի պառաւ շունն էլ պառկած է նրա ոտների տակ։ Երբեմն ուժեղ ու քաջ էին սրանք. ոչ քամուց էին վախենում, ոչ գիշերային մութից, ոչ ծովից։ Նրանք անցած ժամանակից, իրանց ճանապարհորդութիւններից են խօսում՝ իրանց տեսած հեռաւոր երկրներից, փոթորիկներից՝ որոնցից ազատուել են։ —Իսկ յետոյ էլի խօսում են իրանց թոռներից. և երբ տեսնում են փոքրիկ տղաներին՝ քաջաբար նստելիս իրանց հօր հետ, հպարտ ու ինքնավստահ կերպով՝ ուռկաններ, կողովներ տանելիս՝ միմեանց ասում են.

«Սրանք իրանց պապերի պէս քաջ ու պարկեշտ մարդիկ կըդառնան»։

Ահա ինչ է ասում ինձ պատկերը։

ՕՐ. ՍԱԹԵՆԻԿ ՇԽԻԵԱՆ

ՍԵՒԱՆԱՅ ԾՈՎԱԿԸ

Ո՞վ դու ի վաղուց մոռցուած հայրենիք,
Ո՞վ դուք իմ սրտիս անմոռաց տեղիք։
Ա. Չ. Շ.

Բաշադեղ լեռներն գեղեցիկ դէմքով,
Ձիւնապատ գլխներն երկինք են հասցրել,
Ձեռք ձեռքի տրուած, դալար կողերով
Մի վայելչագեղ շրջան են կազմել...

Եւ ինչպէս անմեղ մանկիկ մի քնած՝
Հանգչում է այնտեղ մեղմ օրօրուելով,
Կարծես գթառատ մօր խնամքին յանձնուած
Մի սիրուն մանկիկ—ծովակ անվրդով։

Նորա ջրերն են կապուտակ ու ջինջ,
Երկնային խաղաղ եթերի նման.
Նորա ալիքներ քնքոյշ—հանդարտիկ,
Հայոց ամաչկոտ նորհարսի նման։

Երկինքն ու ծովակ իրար են նայում,
Իբր հարս ու փեսայ հրճուալից տէքով,
Եւ հեռու, դաղտնի, թաղուտեան միջում
Իրար են գրկում կուսական սիրով։

Երկնքի ուրախ ու մռայլ տեսքին
Ծովակն Հայելի է ներկայանում,
Նորա սպառնացող, հեղնող բարբառին
Ազդու արձագանգ իր միջից կրկնում։

Ծովի կապուտակ ջրերից ի վեր
Բարձրանում է մի գեղեցիկ կղզի,
Եւ ուղղահայեաց նրա ժայռուտ ափեր
Իջնում են խորին յատակը ծովի։

Տխուր է կղզին, թէև գեղ շքով,
Լուռ, անձայն, թէև մարդկանց բնակութիւն.
Սիրուն է կղզին, կենդանի տեսքով,
Բայց այնտեղ մեռած է կենդանութիւն...

Կղզու կանաչուտ երեսի վերայ
Բուսնում են ծառեր՝ սաղարթով զարդուած,
Եւ նոցանից վեր սև դմբէթներով՝
Ժայռի վրայ երեք վանքեր կան հիմնուած։

Ծովակին նայող ափերի վերայ
Այրեր, անձաւներ բնութիւնից շինուած.
Այնտեղ մաշելով անձն անդթօրէն,
Ձգնում են մարդիկ աշխարհից փախած։

Թէ երկնից վերայ լուսինն ու աստղեր,
Թէ այրող արևն են թագաւորում—
Այնտեղ չեն դադրում՝ աղօթք, մաղթանքներ,
Երգեր սրտառուչ երկինք են ուղղվում։

Բայց այդ երգերը չեն արտայայտում
Սէրը և զինին, փառքը աշխարհի...
Արհամարհում են այդ և քարոզում
Ունայնութիւնը ամեն վայելքի։

ԳԷՈՐԳ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆՑ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀՈՒՍ

Կոմս Լ. Տոլստոյի "Ясная Поляна"-ից

1.

Մեզնից 500 տարի առաջ Չեխիայի (Բոհեմիայի) Գուսինից դիւղում բնակում էր իր կնոջ հետ Հուս անունով մի չքաւոր շինական: Հուս փայտահատ էր— փայտ էր կտրում անտառի մէջ, իսկ կինը պարապում էր տնային գործերով: Նրանք ունեցան մի որդի և անունը դրին Յովհաննէս:

Այս չքաւոր ընտանիքը մեծ նեղութեան մէջ էր: Հայրը ինքն էր դիր կարդալ սովորեցնում որդուն: Որդին դեռ փոքր և տկար լինելով, չէր կարողանում ինքն իր աշխատանքով օրական ապրուստ ճարել,—վարժարան էլ չէր գնում, որովհետև ոչ կօշիկ ունէր հագնելու, ոչ շոր: Գուսինից դիւղի մօտերքում բնակում էր մի հարուստ կալուածատէր. սա իմացաւ որ Հուսի ընտանիքը կարօտութեան մէջ էր, և օգնեց նրան:

Հովհաննէսի հայրը շուտով մեռաւ. մայրն էլ որդուն վարժարան տուաւ, և այն օրից երեխան սկսաւ ուսում առնել: Վարժարանի ուսումն աւարտելուց յետոյ՝ նա կամեցաւ առաւել բարձր կրթութիւն ստանալ. այս նպատակով գնաց Պրագ քաղաքը և մտաւ Համալսարան: Համալսարանն այնպիսի մի դպրոց է, ուր ուսանում են զանազան բարձր գիտութիւններ: Աղքատութիւնն ստիպեց Յովհաննէսին ծառայութեան մտնելու մի վարժապետի մօտ: Այս ծառայութեան փոխարէն վարժապետը տալիս էր նրան կերակուր, հագուստ և զանազան գրքեր:

Մի անգամ Հուս կարդաց «Վարք Սրբոց» կոչուած գրքում, թէ նահատակներից մէկը, երբ նրան տապակելիս են եղել հրաշէկ երկաթի վրայ, ասել է իր դահիճներին. «Մի կողս տապակուեցաւ, շուռ տուէք ինձ միւսի վրայ»։ Հուս ուզեց փորձել, թէ արդեօք ինքն էլ կարող կըլինէր դիմանալ կրակին, և դրաւ ձեռքը վառուած հրնոցի մէջ։ Համբերութիւնով տանում էր ցաւին. կաշին արդէն սկսել էր ուռչել ու պայթել, և եթէ այդ միջոցին ընկերները վրայ չհասնէին, նրա ամբողջ ձեռքը կայրուէր։

Հուս այնպէս յառաջադէմ էր ուսման մէջ, որ նրան վարժապետ նշանակեցին, իսկ մի քանի ժամանակից յետոյ՝ ռեկտոր ընտրեցին, այսինքն՝ վարժապետների դըլխաւոր։ Այս վարժապետներից ոմանք գերմանացի էին, ոմանք՝ չեխ. չեխերը ունէին առանձին կրօն և առանձին լեզու. գերմանացիք ունէին իրանց լեզուն։ Չեխերը խօսում էին չեխերէն (սլավոներէն) և ռուսների հետ միասին պաշտում էին Կիրիլ և Մեթոդիոս սուրբերին. իսկ գերմանացիք պաշտում էին պապին և գնում էին լատինական եկեղեցին։ Այս պատճառով Պրագի համալսարանի վարժապետներն անմիաբան էին և իրար հետ ստէպ վիճում էին։

Գերմանացի ուսուցիչներն ասում էին չեխացիներին. «Մենք եկել ու նուաճել ենք ձեր երկիրը. մենք ազատ ենք մեր օրէնքներն ու կարգերը դնելու, մեր եկեղեցին, մեր վարժարանը հիմնելու. այս երկրի տէրը մենք ենք, դուք չէք. դուք էք պարտական մեզնից բան սովորելու, ոչ թէ մենք՝ ձեզնից»։

Իսկ չեխերը պատասխանում էին. «Ճշմարիտ է, որ դուք եկել ու նուաճել էք մեր երկիրը, բայց դուք քիչուոր էք, մենք շատուոր. դուք օտար եկուորներ էք, մենք այս երկրի բնիկ ժողովուրդն ենք և սրա տէրը.

ժողովուրդը կամենում է իր լեզուով ուսանել և աղօթել, և պահանջում է որ եկեղեցիների մէջ մեր քահանաները պաշտօն կատարեն, ոչ թէ ձեր պատէրները (քահանաները)։ Դեռ ձեզնից առաջ մենք ունեցել ենք մեր թագաւորները, եպիսկոպոսները, մեր դրքերը. այժմ ստիպում էք, որ գերմանացի դառնանք – միթէ կարելի է այսպէս վարուել։ Եթէ այժ ունենայինք, վաղուց ձեզ կրջարդէինք»։

Գերմանացի իշխանները, գերմանացի պրոֆեսսորները (ուսուցիչներն) և լատինական պատէրները բանի տեղ չէին դնում չեխերի տրտունջը. վարժարանների մէջ ամեն բան գերմաներէն էին սովորեցնում և ժամասացութիւնը լատինական ծէսով կատարում։

Հուս, տեսնելով թէ որ կողմն էր արդար և որն անարդար, կամեցաւ մի լաւութիւն անել իր ազգին։ Նա մի առանձին սէր չունէր գիտնական մարդ դառնալու. նրա գլխաւոր ցանկութիւնն էր՝ ուսուցանել ժողովրդին Աստուծոյ խօսքը, քարոզներ կարդալ և ճշմարիտ հաւատ տարածել։ Երբ նրան քահանայ ձեռնադրեցին, նա ստացաւ Բեթղեհէմի մատուռը և այնտեղ սկսաւ վարդապետել։ Նա խօսում էր ճարտար և հասկանալի լեզուով և ժողովուրդը սիրում էր նրան ականջ դրնել։ Հուս յորդորում էր ազգակիցներին ամուր պահպանել իրանց հայրենի հաւատը, իրանց մայրենի լեզուն. պահանջում էր, որ նրանք աստուածային պատուէրների համեմատ ապրեն. չափաւոր, զգաստ կեանք վարեն և չարբենան։ Ձեխացոց թագուհին այնպէս հաւանեցաւ Հուսին, որ նրան խոստովանահայր ընտրեց։ Լատինական պատէրներն էլ գովում էին Հուսին և ասում էին. «Սուրբ հոգին է, որ խօսում է նրա շրթունքով»։

ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ

(Կըշարունակուի)

ՋՐՕՐՀՆԵՔՔ

(ՊԱՏՄԱԿԱՆ)

Մեն տարի յունուարի 6-ին՝ Ջրօրհնէքին ամենքն ուրախութիւնով շտապում են եկեղեցի կամ գետի ափը «խաչը ջուրը ձգելու» հրաշափառ հանդիսին մասնակցելու, որը յատուկ շքեղութիւնով է կատարվում մեր եկեղեցում։ Այդ օրուայ խիստ ցուրտն ու սառնամանիքը յաղթահարվում են ու կարծես չքանում ջերմ փափագի, հաւատի ու սիրոյ առաջ։ Եւ չիրաւի, ով է այդ օրը վախենում մրսելուց։ Այդ օրը մեր հոգին ու սիրտը տիրում են կատարելապէս մեր մարմնին և ընկճում նրան։ «Հոգին առաւել է քան զմարմին», ասել է Տէր Յիսուսը, Որը այսօր մկրտուելով՝ պարգևեց մեզ նոր քաղցր կեանք, փրկեց մեզ խաւարի ճանկերից, շնորհեց լոյս և ազատութիւն մեր մտքին, սէր, գութ, խղճմտանք՝ մեր սրտին։ Ինչպէս է կատարում մեր եկեղեցին այժմ այդ հանդէսը՝ ձեզ ամենքիդ յայտնի է։ Անշուշտ շատ հետաքրքրական

կըլինի քեզ, փոքրիկ ընթերցող, իմանալ՝ ինչպէս էր լինում այդ հանդէսը միքանի հարիւր տարի առաջ մեր պապերի ժամանակ։

Մի եւրոպացի ճանապարհորդ Արեւելքում՝ Հաննովերի Հելտեսհայմ քաղաքացի կրօնաւոր Վիլլեբրանդ անունով՝ 674 տարի առաջ իր ուղեւորութեան ժամանակ՝ գտնվում էր Կիլիկիայում, ուր երկու ամսի չափ հիւրասիրեց նրան մեր Լեւոն Ա. թագաւորը։

Վիլլեբրանդ վարդապետը Սիս քաղաքում 1211 թուին ներկայ լինելով Հայոց Ջրօրհնէքի հանդէսին, ահա ինչպէս է նրան նկարագրում, որը մէջ ենք բերում, Հայր Ալիշանի «Յուշիկք» պատուական գրքից քաղելով։

«Սիս քաղաքը՝ տէր թագաւորի մայրքաղաքն է. բնակիչները են անթիւ և հարուստ. պարիսպ չունի, ուստի նրան աւելի քաղաքաւան կըկոչէի, եթէ մէջը չըլինէր Հայոց կաթողիկոսարանը։ Սակայն ունի մի սմուր բերդ լեռան գագաթի վրայ, որի ոտքից սկսվում է քաղաքը աստիճանաբար դարձվայր տարածուելի։ Ջրօրհնէքի հանդէսը Հայերը այս կերպով են կատարում. ծննդեան տօնից տասներկու օր առաջ՝ որ մենք լատիններս խրնդումով կերուխումով ենք անցկացնում, նրանք ապաշխարութիւնով և պասով են անցկացնում՝ հրաժարուելով մսից, գինուց, իւղից։ Իսկ Բուն խաչման օրը՝ բոլորովին ծոմ են պահում, որպէս զի վերջալուսից յետոյ պատարագ մատուցանեն։ Իսկ երրորդ օրը Քրիստոսի ծննդեան տօնն են կատարում, ասելով՝ Յիսուս նոյն օրը ծնաւ և 30 տարուց յետոյ նոյն օրը մկրտուեց։ Առաւօտեան ամենքը շտապում էին քաղաքի մօտի գետերը գնալ, ուր որ թագաւոր տէրն էլ գնում էր՝ այս կարգով. ինքը թագաւորը զարմանահրաշ ճոխ պճնուած բարձրահասակ ձիու վրայ հեծած էր. նրա կողքից գնում էին Ալեման ասպետների կարգապետը, Սելևկիոյ հիւրընկալ ասպետների բերդապետը, իրանց կրօնակից հազար ընկերներով. յետոյ գալիս է տէր Ռուբէն թագաւորաղնը, դրա ետևից Հայոց երկրի ազնուականները, իշխանները, և զօրականների բազմութիւնը գեղեցկապարդ հագնուած, որոնց մարդիկ ամեն մէկ զօրախմբի դրօշները և վառերը տանում էին ձեռներին բարձրացրած և նրանց տարած ձիերի

սանձից բռնած՝ մեծ թագաւորի առաջից գնում էին։ Նրա և այդ խմբի միջով գնում էին շատ զինակիր փայտիկներ, իբրև անձնապահներ թագաւորի, իսկ ժողովրդի բազմութիւնը չորս կողմից ողջունում էր նրան սաստկաձայն աղաղակելով. «ՍՈ՞ՒՐԲ ԹԱԳԱՒՈՐ»։ Այսպիսի մեծ հանդէսով թագաւորն եկաւ իջաւ զեռեղերքը կանգնած վրանի տակ. ապա եկան յոյներն իրանց սրբազանով, շատ սրբազան սպասներով, և ապա այնչափ փողերի և երաժշտական նուագների ձայներ էին լսվում, որ աւելի մի հանդէս քան թէ մի թափօր էր ձևանում։ Սրանք էլ եկան իրանց որոշած տեղը կանգնեցին, և ամենքը սպասում էին Հայոց եկեղեցական ուխտին, որ գալիս էր խաչերով խաչվառներով, ոսկեհուռ զգեստաւորուած, ակնախտիղ ծանրագին սպասներով, իրանց կաթողիկոսով, խոնարհական կերպով վայելչակարգ թափօր կազմած։ Երբոր բոլոր թափօրը մէկ տեղ եկաւ, սկսեցին քաղցրաձայն երգել, գրքեր, աւետարաններ և աղօթքներ կարդալ. օրհնեցին ջուրը, մկրտեցին ս. խաչը հեղմամբ սրբալոյս միւռոնի։ Այն ժամանակ մէկը դեռի մէջ մտաւ և շաքարաբերան կանչեց, «կեցցէ թագաւոր մեր յաւիտեան». բոլոր բազմութիւնը պատասխանեց. «ամէն»։ Յետոյ թագաւորը և ուրիշները օրհնած ջրով իրանց ցողեցին, իսկ ասորիները մերկացած ընկան ջուրը։

«Այս արարողութիւնն աւարտելուց յետոյ եկեղեցականները յետ դարձան իրանց տեղը, իսկ թագաւորը և զինուորականները փութացին դէպի դաշտերը, և պալատականները երիվարները վազեցնելով, նիզակներ նետելով՝ զինուորական խաղեր արին, բոլոր օրը մեծ ուրախութիւններով անցուցին։

«Այս էլ գիտացէք, որ տէր թագաւորը այդ Սիս քաղաքի մօտ իրան զբօսանքի մի պարտէզ է պատրաստել, որի սքանչելի փափկութիւնները նկարագրելը խոստովանում եմ, որ իմ կարողութիւնից վեր է»։

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ

Ա.

Ամենայտ գիրքը բնութիւնն է, և ամենքը պարտաւոր են նրան ուսումնասիրել։ Մենք ամենքս ապրում ենք բնութեան գրկում, վայելում ենք նրա բարիքը, հիանում ենք նրա երևոյթներով, և որքան ամօթ կըլինի մեզ համար, որ չուսումնասիրենք նրա օրէնքները և երևոյթները։

Գեղեցիկ է առաւօտեան արշալոյսը, գեղեցիկ է երեկոյեան վերջալոյսը, գեղեցիկ են արեգակի ոսկեգոնյ ճառագայթները, երբ բեկբեկվում են կանաչազարդ ծառերի տերևների միջով և արտափայլում պարզ և փայլուն լճակի ջրում։ Ձատ քիչ շահ կըլինի մեզ, եթէ մենք միայն բերաններս բացած հիանանք այդպիսի տեսարաններով. զարմացած նայենք մրջիւնի շարժման, սարսափած փախչենք սմպի զուռոցից, դուրս գանք լսել սոխակի երգը, և այլն, և այլն. այլև պէտք է քննողական աչքով նայենք այդ ամենի վրայ։

Բնութիւնն ուսումնասիրել են երևելի գիտնականներ. հետևանքը եղել է նշանաւոր գիւտեր, որոնք ծառայել են և ծառայում են մարդկութեան օգտին։ Նիւ-

տօն երևելի գիտնականը նկատելով խնձորի ընկնելը գետին՝ փոխանակ իսկոյն վազելու և խնձորը վերցնելու որ անուշ անէ, նա մտածեց.—«Լաւ, այս խնձորը ինչո՞ւ վերև չգնաց, այլ վայր ընկաւ հողի վրայ. սրա մէջ մի բան կայ». մտածեց և գտաւ որ երկրի ձգողական ոյժն է՝ որ խնձորը քաշեց դէպի իրան։

Մեր բնակած հողի վրայ և մեր ծծած օդի մէջ սողում են և ճախրում անթիւ տեսակ միջատներ. որքան

բազմաթիւ են նրանք։ Ըստ երևոյթին նրանք ոչինչ բաներ են. բայց եթէ մենք հետաքրքրուենք նրանց՝ կեանքով, որքան նոր բաներ կիմանանք և որքան զուարճալի կըլինի այդ նորութիւնները մեզ համար։ Այ օրինակ՝ Դիսանդիէն պատմում է, թէ ինչպէս նա Նորմանդիայում եղած ժամանակ տեսել է, որ մրջիւնները կթում են տերևների վրայ գտնուած ոջիլներին։

Մրջիւնները գրգռում են ոջիլների կաշին, որից դուրս է գալիս կպչող մածուցիկ հիւթ և այդ հիւթով կերակրվում

են մրջիւնները։ Մրջիւնները շատ անգամ այդ տերևային ոջիլներին տանում են իրանց բոյնը և իրանց ամբարի խորքերում պահում են նրանց, ինչպէս մարդիկ գոմում պահում են կովերին։—Թիթեռներ, թիթեռներ, որքան են նրանք. լիքն են գարնան և ամրան օդի մէջ. նրանք ուրախ ճախրում են այս ծաղկից այն ծաղկի վրան։ Դրանց տեսակներին թիւ չկայ. դրանց որսում են մի տեսակ ցանցով, որ թանձից է շինուած քսակի ձևով, մի երկար փայտէ կոթով։ Երբեմն դրանք թռչում են անհամար բազմութիւնով։ Այսպէս 1879 թուականին Արևմտեան Եւրոպայով թռան թիթեռների ամբողջ բանակներ, այնքան բազմաթիւ, որ ամենքի ուշադրութիւնը գրաւեցին։

Ձեղանից ով չէ եղել գիւղում ամառը։ Յիշեցէք այն օրերը։ Պայծառ և գեղեցիկ լուսինը տարածում է իր փայլը խաղաղ և մաքուր օդի մէջ։ Ձորս կողմդ խաղաղութիւն և լռութիւն է տիրում. մեղմ է բնութիւնը և

հանգստանում են նրա բոլոր արարածները։ Միայն այդ լռութեան մէջ մի միաձայն ծղրտոց է լսւում ամեն կողմից ծռռռ... ծռռռ... ծռռռ... ծռռռ. ահա սկսեց մէկը, անմիջապէս միւսն սկսում է նրա ձայնը պահել, երրորդը, չորրորդը, քսաներորդը ծռռռ... ծռռռ... ծռռռ... բոլոր օդը լցուեց այդ մեղմ միաձայն ծռռոցով, բայց որքան ուրախանում է մեր սիրտը այդ միաձայն երգից և ինչ հանգստութիւնով քնում ենք մենք բաց երկնքի տակ այդ մեղմ բնութեան «օր օր»-ի ձայնով։ Դա մեր ամենքին ծանօթ ծղրիկն է. դրա ձայնը մեծ քաղաքներում դուք չէք լսիլ և չէք էլ տեսնիլ նրան։ Նա գեղի տներում է լինում և փոքրիկ քաղաքներում. դա չէ սիրում մեծ քաղաքները, ուր իր մեղմ ձայնը կիսլանայ կառքերի ղռղռոցից։ Տեսէք ա՛յ բռնել են մեր խեղճ ծղրիդին և ձգել են վանդակի մէջ, որը շինած է միջատների համար. ծռռ.. ծռռ.. սա իմ տեղը չէ, ասում է նա, և իր երկար բեխը դուրս է բերել վանդակի փայտերի միջով, բայց չէ կարողանում դուրս դալ և յուսահատուած երգում է իր միօրինակ երգը։

Բնութեան երևոյթներին թիւ ու համար չկայ. նրանք սկզբում շատ զարմանալի և օտարոտի են երևում մեզ և միշտ էլ զարմանալի կերևան, եթէ մենք նրանց վրայ չսկսենք մտածել և չաշխատենք բացատրել մեզ նրանց պատճառները։ Շատ երևոյթներ, որ հին ժամանակներ հրաշք էր համարվում, այժմ բացատրվում է շատ հասարակ կերպով։ Մի փորձ էր անվում հնումը աքաղաղի վրայ

որ ասվում էր «Հրաշալի փորձ». շատերը այդ փորձը տեսնելով, զարմանում էին, շատերը վախենում էին, որովհետև պատճառները չէին կարողանում հասկանալ, իսկ գիտնականները այդ մասին մտածեցին, դրա նման հազար

փորձեր տրին և այդ փորձերից մի նոր գիտություն ստեղծեցին Հիպնոտիզմ անունով, որը դեռ բոլորովին չէ կատարելագործուած։ Այդ փորձը հետևեալն է.

Վերցնում են աքաղաղին և գնում մութ դոյնով յղկած սեղանի վրայ ու նրա կտուցը ամուր սղմում են սեղանի վրայ. որանից յետոյ կավիճով գիծ են քաշում նրա կտուցի մօտից մինչև սեղանի ծայրը, ինչպէս ցոյց է տուած պատկերի մէջ, և բարձրացնում են աքլորի կատարը, որ նա կարողանայ նկատել գիծը, հէնց որ գիծը հասցնէք 10—12 վերշոկի, աքաղաղը կարծես փայտանում է, ընկնում է թմրութեան մէջ և նա մի ամբողջ բոպէ անշարժ, գլուխը սեղանին կպցրած, կմնայ կանգնած։ Այս երևոյթին այժմ բաւական ուսումնասիրուած է և կոչվում է հիպնոտիզմ։

Ս. ՀԱԽՈՒՄԵԱՆ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Զ.

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ

Երկրագործ ժողովրդի գոյութեան հիմքն է վարելահողը. անասնապահութեան համար էլ համազօր նշանակութիւն ունին արօտատեղերը։ Բագուայ նահանգի զանազան կողմերից, օրինակ Զաւաթի գաւառից, հեռաւոր Պարսկայեն սահմաններից՝ Մուղանի լայնատարած դաշտավայրից՝ ամբողջ մի ամիս յամրաքայլ ուղևորութիւնով՝ գալիս են անասնապահ ժողովուրդները Հին Գեղարքունիք —Նոր-Բայազէտի լեռների արօտները՝ իրանց կենդանիները՝ երկու-երեք ամիս այդ հովուատուն խոտաշատ վայրերում բուծանելու համար. ապա մօտ մի ամիս կրկին Ճանապարհորդելով վերադառնում են իրանց ձմերոցները։ Այդ դեռ բաւական չէ. նոյն իսկ արտասահմանից՝ Տաճկաստանից՝ տեղական անասնապահները՝ սահմանակից ռուսահպատակ քրդերի հովուութիւնով, վերջիններիս որոշ վարձատրութիւն տալով՝ ուղարկում են իրանց մեծաքանակ նախիրները՝ Գեղարքունիքի—Սևանայ շրջակայ արօտներում արածելու ամառային երեք ամսին. այդ հանգամանքը պաշտօնապէս յայտնի եղաւ կառավարութեան միայն այս տարի։ Արդ, երբ մենք աշխատում ենք Ճանաչել վարձառաշահ հարուստ քաղաքները և լի ու բերրի երկրագործ գիւղերը, որոնց շրջապատող գեղանկար ընդարձակ արտերը և մեծ այգիները

տալիս են մեզ Ճերմակ հաց, ընտիր գինի և անոյշ միրգ, նոյնպէս պիտի ծանօթանանք այն բարձր, միայն խոտով ծածկուած լեռների արօտներին, որոնց շնորհիւ մենք ստանում ենք ուտելու միս և իւղ, որ ամենահիմնական և մշտական սնունդն են մարդուս համար հացից և գինուց յետոյ, այլև նրանք մեզ տալիս են պանիր, կաթ, մածուն, սէր ու հագնելիքի և ագանելիքի համար փափուկ բուրդ, տաք մորթի և պերկ կաշի։

Կան ժողովուրդներ, որոնք բացառապէս պարապում են անասնապահութիւնով. այդպէս են բոլոր քրդերը, որոնք վար ու ցանքի վրայ ոչինչ գաղափար չունին. նոյնպէս Թուրքերի մի բաւական մասը անասնապահ է, երկրագործութիւն չունին. այդ տեսակ հայերը չկան ոչ մի տեղ. հայերը բացառապէս հողագործ են, այդ բառի ընդարձակ նշանակութիւնով. անասնապահութիւնը նրանց համար անծանօթ բան չէ, սակայն այդ պարապմունքը նրանց տնտեսութեան մէջ երկրորդական տեղն ունի և այդ մասի մէջ հայերը շատ յետ են մնացած քրդերից և Թուրքերից ու չունին դրանց չափ հըմտութիւն և փորձառութիւն անասնապահութեան մէջ։ Եթէ դուք կամենում էք լաւ ընտիր ցեղական (ջինս) կրթուած ձի, երիվար, նժոյգ, կով, եզ, գոմէշ, ոչխար ունենալ՝ պիտի դիմէք Թուրքերին և քրդերին. եթէ ուզում էք ձեր ասլանքը ջորիների և ուղտերի կարավաններով ճանապարհել՝ դիմեցէք միայն Թուրքերին. եթէ ցանկանում էք պատուական և զմայլելի զանազան բրդի գործուածներ ձեռք բերել՝ գորգեր, զանազան տեսակի կապերտներ և այլն՝ դիմեցէք Թուրք և քուրդ կանանց ձեռագործներին։ Մեր երկրում վաճառականվող իւղն ու պանիրը գրեթէ գլխովին Թրքական և քրդական արդիւնաբերութիւն են. այսպէս է հայերի վիճակը ամբողջ անդրկովկասում անասնապահութեան մէջ։ Քրդերը՝ կարելի է ասել, բացառապէս խաշնարած են, գրեթէ միայն ոչխարապահութիւնով են ապրում. այդ մասի մէջ նրանք վարժ են և համբաւ ունին. այդ է նրանց տիրական պարապմունքը. Թէպէտ կան որոշ քրդական ցեղի պատուական եզ, կով լաւ մարզուած ձի, բայց դրանցով քրդերը զբաղուած են այնքան, որ իրանց առանին հարկաւորութիւնները լցուցանեն։ Թուրքերը ոչխարաբուծութեան մէջ քրդերի հետ մրցել կա-

ըողանալուց զատ՝ առաջին տեղն են բռնում տաւարապահութեան մէջ. ձիատածութեան և ուղտապահութեան մէջ նրանք ախոյեան չունին իրանց դէմ. Թուրքերը վերջապէս կարող են համարձակ մենավարձառ համարուիլ խոշոր կենդանիների առևտրում։ Հիմա դժուար չէ հասկանալ, որ յիշած Գեղարքունիքի—Նոր-Բայազէդի անուանի մեծատարած արօտները՝ համարեա ամբողջապէս Թուրքերի և քրդերի ձեռքի տակն է. ուստի այդ արօտների մասին խօսելիս՝ չի կարելի նախ չյիշել և մի փոքր ծանօթանալ Թուրքերին և քրդերին և ապա անցնել հայերին, որ է նամակիս բուն նպատակը։

Անասնապահ Թուրքերը, որոնք երկրագործութիւնով չեն պարապում, կոչվում են էլաթ, այսինքն Թափառական կեանք վարող. այդպէս են և բոլոր քրդերը. դրանց մի մասը ամբողջ տարին վրանների մէջ է ապրում, որովհետև հաստատ ձմերոցներ չունին, այլ ամեն մի տարի ստիպուած են ձմերային տեղեր կապալով վերցնել զանազան կալուածատէրերից. իսկ որոնք որ ընդ միշտ ստացած ունին ձմերոցներ, ուր ամեն տարի նրանք անց են կացնում հոկտեմբերը, դեկտեմբերը, յունուարը, փետրուարը ամիսները՝ շինած ունին հաստատ բնակութիւններ—տներ, գոմեր. սրանք էլ ասվում են Ծախթա-զամի – այսինքն այնպիսի տների մէջ ապրող, որոնք ունին դռներ, փայտէ, տախտակէ դռներ։ Շարուրի մեծ դաշտում, Արաքսի եզերքում ապրող քրդերը և անասնարոյծ Թուրքերը ամենքը ձմեռը ապրում են տներում, որոնք գիւղի կերպարանք և յատուկ անուններ ունին, օրինակ. Սարաչլու, Քեսրլիմբայլու, Բօրալան, և այլն և այլն. կան Թուրքի գիւղեր, որոնց կէսը հողագործ-անասնապահ են, իսկ կէսը միայն անասնապահ. օրինակ Սաղարակ, Օրթլու-Թազաքենդ, Զէյվա, և այլն և այլն։

Ձմերանոց տեղերին Թուրքերէն ասում են Ղշլաղ կամ Արան. ձմեռը խոշոր անասուններն՝ կով, եզ, ձի՝ պահում են տներին կից գոմերում կամ գետնափոր պատսպարաններում, որ ասվում է ղաղմա. իսկ մանր կենդանիներին պահում են մարդիկների բնակութեան տեղից տարակայ՝ հենց նոյն իսկ ձմեռային արօտատեղում. պահպանում են նրանց հովիները. ոչխարների յատուկ ձմեռատեղին կոչվում է ետաղ կամ աղալ. ետաղ նշանակում է հանգչելու տեղ, իսկ աղալ նշանակում է

պատսպարելու տեղ։ Շատ եաթաղներում ու աղալներում շինուած են որջերի պէս գոմեր, կամ փարախներ, ուր անց են կացնում գիշերները ու պենդ ցուրտերին հովիւները իրանց հօտերով. այդ գետնատները կոչվում են սրխանա. իսկ Մուղանում շատերը միայն մի որևէ տեղ պատում են եղեգնից գործած ցանկապատով, ուր բացօդեայ լոկ ցուրտ քամուց միահաւաք պաշտպանվում են հօտերը. այդ եղեգնոցներն էլ կոչվում են բարասիա։

Անասնապահ ժողովրդներից նրանք, որոնք ունին արքունական ձմերային արօտատեղեր, վճարում են գանձարանին օրավարին 10 կոպ. իսկ որոնք վարձում են մասնաւոր կալուածատէրերից՝ տալիս են ոչխարագլուխ 5-ից մինչև 50 կոպեկ։

Ցածը դաշտավայր ձմերոցներում, երբ եղանակը սկըսում է տաքանալ ու տափարակները սկսում են ծածկուել նոր խոտ կանաչ ծիլերով ու ծաղիկների բողբոջներով, այն ժամանակ անասնապահ ժողովուրդները վեր են առնում իրենց վրանները, բոլոր ունեցած-չունեցածները, խոշոր անասունները, դուրս են գալիս ձմերային խրճիթներից ու գնում են երբեմն իրանց գիւղերից բաւական հեռու գտնուող ոչխարների փարախատեղին—եաթաղ կամ աղալը. այդ տեղ մի ամիս կամ ամսուկէս մնալով սկսում են կամաց բարձրանալ դէպի սարերը։ Փարախատեղերում մաքի ոչխարները փետրուարի վերջին, մարտ սկիզբին ծնոտում են իրենց գառները, և մինչև լեռները գնալու միջոցի հասնելը բաւական մեծանում և ուժովանում են այդ վերջինները։

Ալբիլի առաջին թուերից անասնապահները իրանց ընտանիքի բոլոր անդամներով, հօտերով և նախիրներով՝ հետները առած իրանց բոլոր կարողութիւնը՝ խուրձերով, խայտաբղետ կարաւաններով հետզհետէ բարձրանում են դէպի լեռնային ամարանոցները, որ թուրքերէն ասվում է եայլաղ։ Սարը գնացող խուրձերը կամ կարաւանները ասվում են էլ կամ բոչ։ Երկրագործ թուրք անասնապահների ընտանիքի միայն մի քանի անդամն է գնում սար, մնացեալները մնում են ցանքսերի ու այգիների հոգսը քաշելու. դրանք սարն են տանում տնային կահ կարասիքից այնքան միայն, որքան անհրաժեշտ է ամարանոցում։

Սարը գնալիս ունեորները ամենալաւ ձիերը դարդարում

են, որոնց վրայ նստում են իրենց ամեն պճրանքներով ծածկուած մանկամարդ հարսները և աղջիկները. բեռնակիր ուղտերին էլ զարդարում են զանգուլակներով և երփներանգ վինջերով և ուլունքներով։ Նայած ճմերոցից մինչև ամարանոց եղած տարածութեան՝ այդ ճամպրդութիւնը տևում է մէկ օրից մինչև մի ամիս։ Լեռներում ամբողջ մի գիւղի համայնք միասին կամ 5, 10, 20, տուն միասին ունին վեր առած որոշ արօտատեղի, որ ասվում իւրտ, ամեն իւրտ յատուկ անուն ունի. ամառնային արքունական արօտատեղի իւրաքանչիւր օրավարի համար գանձարանին տալիս են հարկ 15 կոպէկ։ Ամեն արօտատեղերում – իւրտում՝ եղած մի խումբ վրանները ասվում է օրա, իսկ Նոր-Բայազէդի հայերը ասում են զոզա կամ զոմա։ Ամենից առաջ Գեղարքունիքի լեռներն են դուրս գալիս քրդերը, որոնք մի ամսաչափ արածացնում են իրենց հօտերն ու նախիրները հայերի ու թուրքերի արօտներում, մինչև սորանց գալը, որ գալիս են ուշ, մայիսի վերջին, յունիսի սկզբին։ Ապա սկսում են նրանք (քրդերը) անցնել, իրանց արօտատեղերի ստորին և հետզհետէ ձիւնի քաշուելովը բարձրանում են մինչև ամենաբարձր լեռների գլուխները, ուրտեղից օգոստոսի կէսին կամաց-կամաց իջնում են։ Քրդերն ասում են. „Բարձր լեռների կատարները զանգատի եկան Աստծու առաջ և ասացին. դու հովիտներն ու դաշտերը լցրիր մարդիկներով. իսկ մենք մնացինք անտէր։ Այն ժամանակ Աստուած սարերի գագաթների աղերսը լսելով՝ նրանց համար էլ ստեղծեց քրդերին“։

Ն. ՏԷՐ-ԱՒԵՏԻՔԵԱՆ



ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Փառք»-ի արծանը բացուած է Ս. Պ. Բուրգում ի յիշատակ ռուսաց յաղթանակի անցեալ պատերազմում ընդդէմ տաճիկների. այդ արծանն էլ նշանաւոր է նրանով, որ 13½ սաժէն բարձրութիւնով կոթողի վրայ կախուած են թշնամուց խլած 104 թնդանօթ – 44-ը պղնձի, 60-ը պողպատի . . . կոթողի ծայրին կանգնած է „Յաղթութեան“ պատկերը երկու սաժէն բարձրութիւնով։

„Ազատութիւն և փառք“ —Երկու նոր բացուած ինքնօրինակ արծաններ։—Միքանի ամիս առաջ բացուեցաւ Ամերիկայի Միացեալ նահանգների հարիւրամեայ անկախութեան յիշատակի արծանը՝ Նիւ-Եորքի նաւահանգստի հանդէպ գտնուած Բեդլօ կղզու վրայ։ Այդ արծանը ունի 305 ոտնաչափ բարձրութիւն—աննման իր տեսակի մէջ։ Հսկայական արծանի գլխում հանգիստ կարող են տեղաւորուիլ 14 մարդ... նա ներքին բռնած է վիթխարի ջահ, որ ցուցիչ է ելեքտրական լոյս իր շրջապատում շատ հեռու։ «Ազատութեան» արծանի ծանրութիւնն է 12,000 փութ, որից 5,000-ը պղինձ է, մնացեալը երկաթ. դրա շինողն է Ֆրանսիացի մեծ ճարտարապետ քանդակագործ Բարթօլդի։

—

Վերջին ժամանակներս Ռուսաստանում մի քանի նշանաւոր մարդիկ, ֆիրմաներ սկսել են ահագին քանակութիւնով ընտիր ժողովրդական դրքոյկներ հրատարակել, որոնց դինն է 1—2 կոպէկ գլխաւորապէս։ Օրինակ. «Ինչպէս պահպանել անասունները» տպուած է 12,000 օրինակ. „Սեւաստոպոլի պաշարում“ 20,000 օրինակ. „Զրօրհնէքի հեքիաթ“ 24,000 օրինակ. „Համբոստ ազգային—ռուսաց պատմութիւն“ 20,000 օրինակ եւ այլն եւ այլն եւ այլն։

—

Ապակեայ Սար։-Նիւ-Եորքում պրոֆեսոր Էդդինգս կարդաց միջեկուցում Օմիսիդ անունով ժայռի մասին, որ ամբողջապէս բաղկացած է մաքուր ապակուց։ Նրա երկարութիւնն է կէս մղոն, բարձրութիւնը երկու հարիւր ոտնաչափ։ Այդ ապակեայ սարը հրաբղխային հրահալութիւնից է առաջացել. այդ ապակու հաստութիւնն է ներքեւի շերտում 100 ոտնաչափ։ Ապակէ սարի գոյնն է մաստիկ բաց մոյգ, բաց կենեմօնի, ծիրանի եւ դեղնականաչ. աւելորդ չլինի յիշել որ արեւի ճառագայթները այդ սարի վրայ թաղ լինուած միջոցին, լոյսի արտացոլացման մի հրաշափառ տեսարան է առաջ գալիս։

—

ՅՈՒՐՏ ՍԵՆԵԱԿՆԵՐԸ ՀԵՌԱՑ ՏԱՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ, պէտք է վեր առնել կէս բաժակ սպիրտ, ածել նրան թաւի մէջ և վառել։ Մի քանի վայրկեանից սենեակը կըտաքանայ։ Եթէ ցուրտը սաստիկ է, այդ գործողութիւնը կարելի է կրկնել։

—**ԴՈՐԳԵՐԸ ՀՄԵՒԻՐ ՄԱՔՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ,** պէտք է նրանց երեսի կողմից փռել ձիւնի վրայ, և ետևի երեսը փայտով թակել. այդ միջոցով գորգի բոլոր փոշին կանցնէ ձիւնի մէջ և նա կըմաքրուի խոպառ։

—Փարիզում ապրում է այժմ մի իտալացի զրադէտ, որի անունն է Կամինի. նա խօսում է և գրում 93 լեզուներով և բարբառներով։ Այս լեզուագէտը գերազանցեց յայտնի Մեցցօֆանտի կարդինալին, որ լաւ խօսում էր միայն 58 զանազան բարբառներով։



ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

«Ի՞նչ բան է արդեօք մեր կեանքն անցաւոր.
Ո՞վ է արդարը և ո՞վ մեղաւոր։
Լաց ենք լինում միշտ, ծիծաղում, խնդում,
Բայց ինչո՞ւ համար,—ո՞վ է իմանում»։
Կա՛յ արդեօք մի մարդ աշխարհիս վերայ,
Որ այնպէս զգայ, թէ ինքը չկայ,
Թէ ի՞նչ էր առաջ, ի՞նչ կըլնի յետոյ,
Երևակայէ չէ ու թ ի ւ ն, չ գ ո յ»։
«Կա՛յ արդեօք սահման բուն տարածութեան,
Ո՞ւր են ծայրերը ստեղծագործութեան.
Կամ ի՞նչ ասել է «յաւիտենական»,
Ո՞ւր է դրա սկիզբն և ո՞ւր է վախճան»...
—Եթէ մէկն այսպէս դժուար հարցերով
Տանջելու լինի իր միտքն օրերով,
Ի՞նչ դեղ ու ճար կայ այդպիսի անձին,
Ինչով կըսփոփէ իւր սիրտն ու հոգին *)։

---

*) Լաւագոյն պատասխան գրողները խմբագրութիւնից կատանան մի-մի կազմած գիրք։

ՄԱՂԹԱՆՔ ՄԱՆԿԱԿԱՆ



Զիւն տուր սարերին,
Անձրև՝ արտերին,
Կարկուտը չարին,
Զով արևը մեզ։

Բեր մեզ, բեր,
Բեր մեզ, բեր,
Ոչ ցուրտ, ոչ կարկուտ,
Զով արև բեր մեզ։

Անթուփ ծաղիկից,
Աններկ կարմրուկից,
Բարի ցաւերից
Ազատ պահիր մեզ։

Պահիր մեզ,
Պահիր մեզ,
Բարի ցաւերից
Ազատ պահիր մեզ։

Մայրական գթով,
Գրկաբաց ձեռքով,
Ուրախ ժպիտով
Առ քո գիրկը մեզ։

Գրկիր մեզ,
Գրկիր մեզ,
Ուրախ ժպիտով
Առ քո գիրկը մեզ։

Ղ. ԱՂԱՑԵԱՆՑ

ՄԱՆԿԱԿԱՆ ՀԱՁՈՒԵԼԱՂ

(Ժողովրդական)

Հոբի, սիսեռ և այլ հատիկներ կամ մանր քարեր են դարսում հետևեալ ձևի նման՝



Մէջ տեղը կամ կենդրոնումը չորս, իսկ նրա չորս կողմից՝ երեք, երկու և մէկ։ Խաղացողները լինում են երկու հոգի։ Մէկը երեսը շրջում է միւս կողմը, որ չտեսնէ, իսկ միւսը՝ կենդրոնի չորս հատից մէկը վերցնում է և հարցնում՝ — քանիսից։ Չտեսնողը պատասխանում է՝—չորսից։ Վերցնողը անցնում է երկրորդ խմբին և նրանից է վերցնում էլի մէկ հատ և հարցնում—քանիսից պատասխանում է՝—երեքից։ Յետոյ վերցնում երրորդ և չորրորդ խմբերից ամեն անգամ հարցնելով քանիսից, և ստանում է պատասխան—երկուսից ու մէկից։ Վերցնողն այսպէսով մէկ անգամ անցնում է մէկ թևով և ամեն մի խմբից մէկ հատ վերցնելուց յետոյ՝ էլի յետ է դառնում կենդրոնը և այդտեղից գնում դէպի երկրորդ թևը, յետոյ երրորդ և չորրորդ, որով մի ամբողջ պտոյտ է անում, և ամեն մի խմբից մի հատ վերցնում, միայն կենդրոնից վերցնում է բոլոր չորս հատն էլ, որովհետև միշտ կենդրոնիցն է գնում դէպի թևերը։ Այսպէսով ամեն մի պտոյտ անելուց յետոյ խմբերի դասաւորութիւնն

ստանում է հետևեալ ձևերը (վերցրած հատիկի տեղ այդ ձևերում դրած են զրոներ, իբր նրանք չկան այլևս։

1) 2)



Առաջին պտույտից յետոյ (1 ձև) դարձեալ սկսում է վերցնել կենդրոնից և հարցնում՝—քանիսից։ Պատասխանվում է—Ոչնչից. (որովհետև կենդրոնումն այլևս ոչինչ չկայ)։—Քանիսից,—երկուսից — մէկից, — ոչնչից (ուր առաջ մէկն էր ու հիմա չկայ)։ Յետ է դառնում կենդրոնը և այնտեղից գնում է երկրորդ թիւով, ինչպէս առաջ, և մի ամբողջ պտույտ անելուց յետոյ ստանում է երկրորդ ձևը, յետոյ՝ երրորդ։ Երրորդ ձևումն ևս հարցումը շարունակվում է, թէև պատասխանվում է միշտ ոչինչ, միայն պատասխանողը պարտաւոր է աւելի կամ պակաս ոչինչ չասել։

Այս խաղի մէջ պատասխանողը պէտք է սուր յիշողութիւն ունենայ, որ միտը պահէ ա) թէ քանի երրորդ թիւումն է և բ) քանի երրորդ պտույտումն է։ Այդ դժուարութեանը դիւրութիւն տալու համար, պատասխանողը սովորաբար նայում է իր ձախ թաթին և չորս մատներին, որոնց ամեն մէկը երեք յօդից է բաղկացած։ Երբ որ վերցնողը պիտի կենդրոնից վերցնէ, պատասխանողը

աջ ցուցամատը ձախ թաթի մէջ տեղն է դնում, որ ի-մանայ թէ կենդրոնումն է, յետոյ դնում է ճկոյթով և մատը դնում նրա առաջին, երկրորդ և երրորդ յօդերի վրայ։ Այդ որ վերջանում է՝ դարձեալ դալիս է թաթի մէջը և այդտեղից սկսում է դնալ անանուն մատի յօդերով, յետոյ միջի մատի, յետոյ ցուցամատի, որով վերջանում է չորս թաւերի առաջին պտոյտը։ Այսպէս շարունակվում է և երկրորդ ու երրորդ պտոյտները։ Բայց այստու ամենայնիւ անվարժները շատ են սխալվում։ Սխալվողը համարվում է խաղը տանուլ տուած և ենթարկվում է մի փորձի, որ նոյնքան զուարճալի է, ինչքան և խաղը։ Տանուլ տուողին հարցնում են՝ թէ ինչ կենդանու ոտք կուզի, արդեօք ձիու, թէ դոմշի, կամ արջի. ուզտի, թէ շան, կատուի, նապաստակի և այլն։ Խաղացողը եթէ խամ չէ, մեծ ոտք է ուզում, իսկ եթէ խամ է, անխտիր մեծ կամ փոքր, կամ սուելի փոքր քան թէ մեծ, եթէ չգիտէ, թէ որի ոտն է աւելի մեծ, կամ եթէ կարծում է, որ փոքր ոտի պատիժն էլ փոքր կըլինի։ Ուզած ոտի մեծութիւնով կրակի պողերից մի շրջան են շինում և մէջ տեղը մի հատիկ դնում։ Տարուողի աչքերը կապում են կամ երկու ձեռքով փակում։ Նա պէտք է փակ աչքերով կրակէ շրջանի միջից հատիկը հանէ։ Նա աշխատում է այնպէս հանել, որ մատները պողերին չդիպչին, կամ փոխանակ հատիկի՝ կրակ չվերցնէ, բայց այդ քչերին է յաջողվում, մանաւանդ երբ ուզած ոտքը փոքր կենդանու է եղել, ուրեմն և շրջանը փոքր։ Անյաջողութեան վրայ երեխէքը ծիծաղում են և ծիծաղում անվերջ, մինչև որ կըհանէ նա շրջանի մէջ դրած հատիկը . . .

Ղ*

Առաջ. Յ. Տէր-Յովհաննիսեան.

1) Այս ցանցերի մէջ պէտք է տեղաւորել – 4 ն, 4 շ, 2 ու, 2 ա, 1 ւ, այնպէս որ ինչ բառեր կազմվում են վերևից ներքև կարդալիս, նոյն բառերը կազմուին ձախից աջ կարդալիս:

ՐԵԲՈՒՍ

Առաջ. Ա. Սարդարեան

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ: